AZG NEW 1.QXD 6/30/2009 10:56 PM Page 1

Ազգ
Azg

1 ՅՈՒԼԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 121 (4257)

ISSN: 1829-1651
9 771829 165003 09121

## Իրանը հետ է կանչել Բաքվում իր դեսպանին

Ըստ Panarmenian.net-ի, Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի՝ Բաքու կատարած այցից հետո Ադրբեջանում Իրանի դեսպանը արագ հետ է կանչվել խորհրդակցության համար: Իրանի իշխանությունների այդ որոշումը կայացվել է երկրի հասցեին հնչած սպառնալիքների պատճառով, որոնք հնչել են Բաքվում: Դեր է ունեցել նաեւ այն փաստը, որ հունիսի 21-ին, մեկնաբանելով Իրանի ընտրությունները, Իսրայելի նախագահ Պերեսը հույս է հայտնել, որ ներկայիս Իրանի կառավարությունը «կանհետանա»: Հունիսի 2-ին Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր շտաբի ղեկավար Հասան Ֆիրուզաբադին դատապարտել է Իսրայելի նախագահի այցը Բաքու, ինչպես նաեւ ծրագրվող Ադրբեջանի դեսպանատան բացումն Իսրայելում: Նա հայտարարել է, որ Թեհրանը ձգտելու է սահմանափակել իսրայելական ազդեցությունը հարեւան պետություններում: Որոշ ադրբեջանական քաղաքական գործիչներ եւ լրագրողներ Ֆիրուզաբադի խոսքերն ընդունել են որպես կոպիտ միջամտություն ինքնավար պետության ներքին գործերին, հաղորդում է newsru.co.il-ը:

## «Այն միլիոնները, որ պետք է մտնեին համայնքային բյուջե, մի մասը գնար պետական բյուջե, չգիտես՝ ուր են գնացել եւ ում գրպանը»

Երեկ ԱԺ-ում տեղի ունեցավ Վերահսկիչ պալատի նիստը: Ուսումնասիրվել է 6 ոլորտ եւ բացահայտումների մի մասն ուղարկվելու է դատախազություն:



ՖՈՏՈԼՈՒՐ

Ներկայացվեց մշակույթի նախարարությունում կատարված ուսումնասիրության արդյունքը, որը վերաբերում է 2007-08 թվականների բյուջետային ծախսերին: Ըստ այդմ պարզվել է, որ նախարարությունն, օրինակ, կառավարության պահուստային ֆոնդի հատկացրած գումարների ծախսի մասով, ըստ Վերահսկիչ պալատի, թույլ է տվել 61 միլիոն 499 հազար դրամ ֆինանսական խախտում, եւ դա պետք է վերադարձվի բյուջե: Նախարարության ՊՈԱԿ-ների գործունեության մասով Վերահսկիչը հայտնաբերել է 24 միլիոն դրամի, իսկ հուշարձանների պահպանության գծով՝ 118,5 միլիոն դրամի խախտում, որոնք նույնպես պետք է վերադարձվեն բյուջե:

Ըստ Վերահսկիչ պալատի նախագահ **Իշխան Զաքարյանի**՝ մշակույթի նախարարությանը դեռեւս 2006 թվականից «Սայաթ-Նովա» օպերան բեմադրելու համար հատկացրել է 14,9 միլիոն դրամ, որը չկա, իսկ օպերան էլ առ այսօր բեմադրված չէ:

Կամ նախարարությունը մի քանի տասնյակ հեղինակների գրքեր է հրատարակել 500-ական տպաքանակով, որոնցից մի քանիսն են ընդամենը վաճառվել:

Իշխան Զաքարյանը հայտնաբերվածի մասով զրուցել է նախարարի հետ, սակայն իրենց դիրքորոշումը մնում է անփոփոխ՝ գումարները պետք է վերադարձվեն բյուջե:

Տես էջ 3

ՀԱՄԱՌՈՏ

## Հրեա գիտնականն ամաչում է ցեղասպանության հարցում Իսրայելի դիրքորոշման համար

Ըստ Panarmenian.net-ի, Հայոց ցեղասպանության 94-ամյակի կապակցությամբ բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատի Հայաստան-Մեծ Բրիտանիա խորհրդարանական խումբը «Հայոց ցեղասպանություն. Միջազգային ճանաչում եւ համապատասխան մարտահրավերներ» խորագրով խորհրդաժողով էր կազմակերպել: Մասնակցության հրավեր են ստացել պրոֆեսոր Իսրայել Չառնին եւ հրապարակախոս, The California Courier-ի հրատարակիչ Հարութ Սասունյանը: Իսրայել Չառնին Երուսաղեմի Հոլոքոստի ու ցեղասպանությունների հետազոտման ինստիտուտի գլխավոր տնօրենն է, «Ցեղասպանությունների հանրագիտարանի» գլխավոր խմբագիրն ու մի քանի գրքերի հեղինակ է: Վատ ինքնազգացողության պատճառով Չառնին չկարողացավ մասնակցել գիտաժողովին, սակայն հոդված էր ուղարկել, որն ընթերցեց համաժողովում BBC ռադիոկայանի նախկին հաղորդավար Պիտեր Բարքերը: Ինչպես գրում է Հարութ Սասունյանը՝ Չառնին իր հոդվածում անդրադարձել է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Իսրայելի՝ որպես պետության, անկարողությանը: Իսրայելցի գիտնականը խորին ափսոսանք ու ամոթ է արտահայտել, որ հենց Իսրայելի ու ԱՄՆ-ի ղեկավարությունները չեն կատարում բարոյական պարտավորությունները հայ ժողովրդի առջեւ:

## Հարբած ոստիկանները հրկիզել են 30-ամյա մի հայի

Ռուսաստանում երեք հարբած ոստիկաններ գողության մեջ կասկածվող մի հայի վրա բենզին լցնելով այրել են: Լուրը հաղորդում են հունիսի 30-ին ավստրիական «Քլայնե ցայթունգը»՝ հղում անելով APA-ին, գերմանական n-tv-ն՝ հղում անելով «Գազետա» թերթին:

Վոլգայի Սարատով քաղաքում երդվյալ ատենակալներից մեկը արդարացված է համարում, որ սկզբում կասկածյալ գողին փայտերով ծեծել են, հետո անտառում սպանել: Ոստիկանները սպանության մեջ մեղավոր են ճանաչվել:

2008-ի հոկտեմբերին 30-ամյա հայը, ի հեճուկս տանջանքների, հանցանքը չի ընդունել: Ոստիկաններն անտառում ողջ-ողջ հրկիզել են նրան: Ռուս ոստիկաններին սպառնում է ցմահ բանտարկություն:

Գերմանալեզու հիշյալ լրատվամիջոցները գրում են, թե Ռուսաստանում հաճախակի են դարձել ոստիկանների՝ իրենց երկրի խաղաղ քաղաքացիների հանդեպ մահվան ելքով բռնարարքները: Ապրիլին Մոսկվայի ոստիկանական ծառայություններից մեկի ղեկավարը, որը նույնպես հարբած է եղել, աֆեկտի մեջ 3 մարդու սպանել, 6-ին վիրավորել էր:

Ան. Հ.
Գերմանիա

## Հունական բիզնեսն օգնում է եւ ներկայացնում




Երեկ Երեւանում տեղի ունեցած հայ-հունական գործարար համաժողովի հայկական կողմի կազմակերպիչն էր Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը (ՀԱԳՄ), որի նախագահ **Արսեն Ղազարյանը** լրագրողներին ներկայացրեց համաժողովի անցկացման նպատակները: Նա մասնավորապես նշեց, որ համաժողովը երկու բաղկացուցիչ ունի: Առաջինը՝ կրթական ծրագրի շրջանակներում հունական կողմը հայկական բիզնեսի համար միջին օղակի մենեջերներ պետք է պատրաստի: Հաջորդը՝ հունական ընկերությունները, թվով 17, իրենց ապրանքներն ու ծառայությունները կներկայացնեն Հայաստանում: Մասնավորապես առեւտրի, թեթեւ արդյունաբերության, ոսկերչության, տուրիզմի եւ այլ ոլորտների հունական ընկերությունների ներկայացուցիչները հայ գործընկերների հետ կքննարկեն համագործակցության այս փուլի հարցերը:

Արսեն Ղազարյանը հայտնեց, որ սա երրորդ ավանդական միջոցառումն է, որից հետո, հույս կա, որ կավելանան Հայաստանի եւ Հունաստանի միջեւ ապրանքաշրջանառության ներկայումս փոքր ծավալները: ՀԱԳՄ նախագահը շեշտեց, որ տնտեսական հարաբերությունները պետք է բարձրացնել Հունաստանի հետ մեր երկրի ունեցած քաղաքական եւ պատմամշակութային կապերի մակարդակին:

Ա. Մ.

## ՀԴՄ կտրոնների դիմաց բոնուսների տրամադրումը մեկնարկում է

Չշահած հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների դիմաց բոնուսների տրամադրման գործընթացը կմեկնարկի հուլիսի 1-ից: Տրամադրվող գումարի չափը կլինի տարբեր՝ 2500-ից մինչեւ 200 հազ. դրամ: Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն շուրջ երեք ամիս նախապատրաստվել է այս գործընթացին, որպեսզի գումարի տրամադրման ընթացքում տարածքային հարկային տեսչություններում եւ բանկերում հերթեր չգոյանան: Այս տարվա ապրիլ, մայիս եւ հունիս ամիսներին հավաքված այն ՀԴՄ կտրոնները, որոնք մասնակցել են անցկացվող հատուկ վիճակահանությանը եւ չեն շահել, կարող են մասնակցել այս ակցիային եւ լրացուցիչ գումար բերել: Բոնուսները կտրամադրվեն առաջիկա երեք ամիսներին՝ հուլիսին, օգոստոսին եւ սեպտեմբերին: ՊԵԿ տեղեկատվության համաձայն՝ եթե քաղաքացին եռամսյակի ընթացքում հավաքել է 50 կտրոն, որում ֆիքսված շրջանառությունը կազմում է 100 հազ. դրամ, ապա նրան տրամադրվող բոնուսի գումարը կկազմի 2 500 դրամ: Եթե 100 կտրոնում ֆիքսված գործարքի արժեքը կազմի 200 հազ. դրամ, բոնուսի գումարը կկազմի 5 հազ., 400 հազ.-ի դեպքում՝ 15 հազ. եւ 600 հազ.-ի դեպքում՝ 20 հազ. դրամ եւ այսպես շարունակ: Քաղաքացիները բոնուս կարող են ստանալ մեկ եռամսյակի ընթացքում՝ ապահովելով նվազագույնը 50 եւ առավելագույնը 1 000 կտրոն, որոնցում արտացոլված ընդհանուր գումարը կկազմի նվազագույնը 100 հազ. եւ առավելագույնը 6 մլն դրամ, հաղորդում է «Արմենպրեսը»:

## Ազատ է արձակվել 228 մարդ

Արդարադատության նախարարությունից հաղորդում են, որ Ազգային ժողովի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման համաձայն՝ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից հունիսի 29-ի դրությամբ ազատ են արձակվել թվով 228 դատապարտյալ:

## Արթուր Աբրահամը՝ հեռուստատեսային մագնիս




Գերմանիայում մինչեւ 5,75 միլիոն հեռուստադիտող է հետեւել շաբաթ օրը՝ հունիսի 27-ին ARD-ի ուղիղ եթերով հեռարձակվող Արթուր Աբրահամ-Մահիր Օրալ մրցապայքարին: Սա նշանակում է, որ ԳԴՀ-ում ամեն 3-րդ հեռուստադիտող նախընտրել է հետեւել այս մրցամարտին: Շաբաթ ուշ երեկոյան հեռուստատեսային ոչ մի հաղորդում այդքան բարձր վարկանիշ չի ունեցել, տեղեկանում ենք Աբրահամի մամուլի ծառայության՝ մեզ ուղարկած հաղորդագրությունից:

Կիրակի օրը՝ հունիսի 28-ին բռնցքամարտի աշխարհի չեմպիոնն իր գոտու 10-րդ պաշտպանությունը նշել է 120 հյուրերի ներկայությամբ՝ Շպրե գետում 5 ժամ նավարկելով: Նավի տախտակամածին Բեռլինի պայծառ արեւն ու ջերմ հյուրասիրությունը Արթուրի ընտանիքի անդամների հետ վայելել են նրա երկրպագուները՝ հանրահայտ ու հարազատ մարդիկ՝ մարզիչ Ուլլի Վեգները ու նրա տիկինը, մենեջեր Զաուերլանդը՝ տիկնոջ ուղեկցությամբ, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ու «Տիգրան Մեծ» հրատարակչատան տնօրեն Վրեժ Մարկոսյանը, «Յունիբանկի» գործադիր տնօրեն Վարդան Աթայանը եւ ուրիշներ::

Մի լուր էլ Աբրահամ կրտսերի մասին. օգոստոսի 29-ին EE-EU վարկածով կիսամիջինքաշայինների աշխարհի չեմպիոն Ալեքսանդր Աբրահամը Գերմանիայում 3-րդ անգամ կպաշտպանի չեմպիոնական գոտին: 26 մրցամարտում անպարտելի չեմպիոնի մրցակիցը 25-ամյա խորվաթ Անտե Բիլիքն է, որը 22 մրցամարտից 20-ը ավարտել է հաղթանակով:

Ան. Հ.
Գերմանիա

ԱԶԳ

# Ընթացիկ

# Հունիսին Հայաստանում արձանագրվել է փոքր գնանկում

Համաձայն ազգային վիճակագրական ծառայության տվյալների, այս տարվա հունիսին մայիսի համեմատ Հայաստանում արձանագրվել է 0,3 տոկոս անկում: Ընդ որում, պարենային ապրանքների գները նվազել են 1,4 տոկոսով, իսկ ոչ պարենային ապրանքների գներն աճել են 2 տոկոսով, ծառայություններինը՝ 0,4 տոկոսով: Ինչ վերաբերում է հունիսի գնաճի ցուցանիշին՝ համեմատած 2008-ի հունիսի հետ, ապա այն կազմել է 3,6 տոկոս: Այս դեպքում եւ պարենային ապրանքները գնանկում են ունեցել 0,2 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 4,8 տոկոսով, ծառայություններինը՝ 10,1 տոկոսով:

Հունիսին մայիսի համեմատ բանջարեղենի եւ կարտոֆիլի գները Հայաստանում նվազել են 10,5 տոկոսով: Այդ գնանկումը հիմնականում պայմանավորված է կանաչ լոբու, կանաչ պղպեղի, կաղամբի, վարունգի եւ լոլիկի 30-50 տոկոս գնանկմամբ: Մոտ 3-10 տոկոսի սահմաններում նվազել են սմբուկի, սոխի, խառը կանաչեղենի եւ կանաչ սոխի գները, սակայն 8-60 տոկոսով աճել սխտորի, ճակնդեղի, գազարի, կարտոֆիլի գները: Այս տարվա հունիսին զգալի գնանկում գրանցած սննդամթերքներից է հավի ձուն, որի միջին գինը Հայաստանում նվազել է 6,7 տոկոսով, իսկ Երեւանում՝ 10,1 տոկոսով:

Կենդանական եւ բուսական յուղերի ապրանքախմբում հունիսին մայիսի նկատմամբ գնանկումը կազմել է 1,2 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է կարագի 2 տոկոս գնանկմամբ: Արեւածաղկի բուսական յուղերի գները իջել են 1 տոկոսով:

Հացամթերքների ապրանքախմբում նույնպես հունիսին մայիսի համեմատ արձանագրվել է գնանկում՝ 0,6 տոկոսով: Դա պայմանավորված է հացահատիկի 5,7 տոկոս, ոսպի՝ 3 տոկոս, մակարոնեղենի՝ 1,8 տոկոս, առաջին տեսակի ալյուրի՝ 1,4 տոկոս գնանկմամբ: Բարձր տեսակի հացի գինը նվազել է 0,4 տոկոսով, առաջին տեսակինը՝ 0,3 տոկոսով:

Կաթնամթերքի շուկայում արձանագրվել է 0,4 տոկոս գնանկում, հրուշակեղենի, ծխախոտի եւ ոգելից խմիչքների գները մնացել են անփոփոխ: Ոչ ոգելից խմիչքների, մսամթերքի, շաքարավազի, սուրճի, թեյի գներն աճել են 0,2-0,3 տոկոսով: Մրգի ապրանքախմբում արձանագրվել է 1,4 տոկոս գնաճ: Տանձի, ադամաթզի, նարնջի եւ խնձորի գները հունիսին մայիսի համեմատ աճել են 0,1-12,7 տոկոսով, իսկ ելակի ու կիտրոնի գները նվազել 50,4 եւ 1,6 տոկոսով:

Ոչ պարենային ապրանքներին գների աճը հունիսին մայիսի համեմատ, ինչպես արդեն նշեցինք վերեւում, կազմել է 2 տոկոս, ինչը մեծապես պայմանավորվել է բենզինի 8,8 տոկոս եւ դիզվառելիքի 5,3 տոկոս գնաճով: Գորգեղենի, կենցաղային տեխնիկայի, տեքստիլի, ոսկերչական, գեղահարդարման ապրանքների, կոշկեղենի, հագուստի եւ գործվածքի, գրենական ապրանքների, լվացող միջոցների գներն աճել են 0,3-3,7 տոկոսով: Մշակույթի ապրանքների եւ խոհանոցային սպասքի ապրանքախմբում գրանցվել է 0,1-2,8 տոկոսով գնանկում, իսկ շինանյութերի գները մնացել են անփոփոխ:

Ծառայությունների ոլորտում 0,4 տոկոս գնաճը պայմանավորված է հիմնականում բուժսպասարկման՝ 0,6 տոկոս, տրանսպորտի՝ 1,2 տոկոս, հանգստի կազմակերպման՝ 6,8 տոկոս գնաճով, կրթության համակարգի, հանրային սննդի, մշակութային ոլորտի սակագների 0,1-0,3 տոկոս գնաճով: Կապի ոլորտում արձանագրվել է 0,2 գնանկում, իսկ բնակարանային-կոմունալ, իրավական ու բանկային սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:



ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Ռադդ քաշի, գնա, եկեղեցին մուրացկանների տեղ չէ»

## Երբ ոստիկաններր ծեծում են տարեց կնոջը

Ինչո՞ւ է այնպես պատահում, որ ոստիկանին հարգելու փոխարեն՝ արհամարհում ես, համազգեստով տեսնելուց պաշտպանվածության փոխարեն՝ վախենում, կաշկանդվում ու փոխում ես ճանապարհդ. հանկարծ դու էլ չդառնաս տեղական ոստիկանական համակարգի հերթական զոհ: Կյանքիդ վնաս չեն հասցնի, սակայն մի լավ կծեծեն:

Հենց այդպիսի մի դեպք էլ պատահեց կիրակի առավոտյան Էջմիածին քաղաքում: Միջին տարիքի մի կին ցանկանում էր Մայր աթոռ եկեղեցում մասնակցել կիրակնօրյա պատարագին, մոմ վառել, եթե, իհարկե, եկեղեցու հարեւանությամբ կանգնած 4-5 ոստիկանները չսկսեին կնոջը հրել՝ արգելելով մտնել եկեղեցու բակ: Նախ՝ կնոջը սկսեց քաշքշել եկեղեցու պահակը՝ ապտակների հետ մեկտեղ հնչեցնելով տարբեր բնույթի հայհոյանքներ ու վիրավորանքներ:

Կինը, կարծելով, թե մոտակայքում արեւածաղիկ չրթող երիտասարդ ոստիկանը կփրկի, թե ինչի համար է այդտեղ կանգնում ու աշխատավարձ ստանում, գուցե կմոտենա եւ կօգնի: Բայց կատարվեց հակառակը: Կնոջ օգնության կանչերից երիտասարդ ոստիկանը մոտեցավ ու շարունակեց պահակի նման կնոջը հրել, քաշքշել՝ հրամայելով տարածքից հեռանալ:

«Բայց ինչի՞ համար, կարո՞ղ է էս եկեղեցին քոնն է, իմը չէ: Էդ ո՞վ է որոշել՝ ով գա էստեղ ու աղոթի, ով՝ ոչ», լացելով հարցնում էր կինը:

Միջամտությանը, թե ինչու են կնոջն արգելում եկեղեցի մտնել, երիտասարդ ոստիկանը ցինիկ կեցվածքով պատասխանեց: «Քու՛ր ջան, չենք արգելում»:

«Ինչպե՞ս չես արգելում, տեսնում ես, որ պահակը ծեծում է, ինձ չես պաշտպանում, մի բան էլ գալիս ես ու սկսում հրել, պահանջում, որ գնամ», շարունակեց տիկինը:

«Դե հերիք է, դավայ, ռադդ քաշի գնա, եկեղեցին մուրացկանների տեղ չէ, գնա, ասում եմ», մոտեցան մի քանի ոստիկաններ՝ քաշքշելով երեւի իրենց մոր տարիքի կնոջը:

«Ես հո չեմ գնում մուրացկանությամբ զբաղվեմ, գնում եմ մոմ վառեմ», լացելով բացատրեց կինը, սակայն ոստիկանները չլսեցին ու հրելով կնոջը հեռացրին տարածքից, արտահայտությամբ, «դու մուրացկան ես, ըստեղ անելու բան չունես, մուրացկաններին ըստեղ տեղ չկա»:

Հարցնող լինեի, թե ովքեր են որոշել՝ ով մտնի եկեղեցի, ով՝ ոչ, ինչպես գրված է Աստվածաշնչում՝ Աստծո տունը բաց է բոլորի համար, ինչը երեւի մի քանի լպրծուն կերպարներ չգիտեին: Դա էլ զարմանալի չէ: Այժմ մարդը դաստիարակվում է ոչ թե գրքերով, բարոյական արժեքներով, օրինակ՝ տղամարդը իրավունք չունի կնոջ վրա ձեռք բարձրացնելու, այլ քցելու, գռփելու արժեքներով եւ ուժն ամեն տեղ բանեցնելու ու ուզածին մի լավ հասցնելու տրամաբանությամբ:

Ինչ վերաբերում է ոստիկանական համակարգին՝ հատկապես ճանապարհատրանսպորտային ոստիկանների աշխատանքը ոչնչով չի տարբերվում մուրացկանությունից: Ճանապարհներին կարգ ու կանոնը հսկելու փոխարեն մեքենա են կանգնեցնում ու մի քանի հազար պահանջում՝ ակտ չգրելու համար: «Դե, ցավդ տանեմ, մենք էլ ենք տուն պահում, մի բան պտի անե՞նք, թե չէ»: Ջավեշտն այն է, որ «մուրացկանությամբ» զբաղվելու համար նրանց պետությունը աշխատավարձ ու պաշտոն է տալիս: Սա էլ՝ իմիջիայլոց...

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽ

# Գրական ընտանիքում հաջողությունների հասնելու բանալին համերաշխությունն է

Հայաստանի գրողների միության հերթական համագումարից առաջ, կիրակի օրը, Ստեփանակերտում համաժողով էր հրավիրել նաեւ ԼՂՀ գրողների միությունը:

Համագումարի պատվիրակներին ուղերձ էր հղել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, որը նախագահի անունից ներկայացրեց նրա առաջին օգնական Էդուարդ Աթանեսյանը:

Անցած չորս տարում միության կատարած աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ ԳՄ վարչության նախագահ Վարդան Հակոբյանը: Խոսելով առկա հիմնախնդիրներից, զեկուցողը առանձնացրեց գրողների միության՝ շենք եւ տրանսպորտային միջոցներ չունենալու հանգամանքը: Նա վստահություն հայտնեց, որ այս ուղղությամբ ԼՂՀ նախագահի տված աջակցման խոստումն առաջիկայում իրականություն կդառնա, բայց եւ միաժամանակ, ըստ բանախոսի, պետք է հենց միությունը տեսանելի քայլեր ձեռնարկի գրչի մշակների հասարակական արժեւորման ուղղությամբ: Անդրադառնալով գրողների սոցիալական խնդիրներին, նա հատկանշեց Ղարաբաղում գրական հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությունը:

Գրական ընտանիքում հաջողությունների հասնելու բանալին գրողների համերաշխությունն է: Հիմնականում այդ մթնոլորտը կա, նշեց Վ. Հակոբյանը, սակայն անելիքներ դեռ ունենք: Այս համատեքստում ԳՄ նախագահը տեղեկացրեց, որ մեկ հոգի հաշվետու ժամանակահատվածում հեռացվել է միության շարքերից:

Արձակի եւ պոեզիայի բնագավառներում գրողների ստեղծագործական ձեռքբերումների մասին զեկուցեցին, համապատասխանաբար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը եւ «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչության տնօրեն, բանաստեղծ Ռոբերտ Եսայանը: Սոսկ հրատարակված գրքերի քանակով չէ, որ չափորոշվում է ստեղծագործական հունձքը: Անցած չորս տարիներին ընթերցողի սեղանին են դրվել գրքեր, որոնք գրականագիտական տեսանկյունից իրոք բարձր արժեք ունեն, տեսակետ հայտնեցին համազեկուցողները:

Համագումարում ընդարձակ ելույթ ունեցավ հայաստանյան պատվիրակության ղեկավար, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը: ՀԳՄ նախագահը անդրադարձավ նաեւ հայ գրականությունը միջազգային ասպարեզ հանելու ծրագրերին, ասելով, որ այդ շրջանակում նախատեսվում է Արցախում եւս ստեղծել հանձնախումբ, որը կզբաղվի տվյալ հարցերով: Միեւնույն ժամանակ, նշեց նա, հարկ է վերջնականապես ճշտել գրողների միության կարգավիճակը: Համաձայն գործող օրենքի, ներկայումս միությունները հասարակական կառույցներ են, մինչդեռ ստեղծագործական կազմակերպությունը պետք է տարբերվի ՀԿ-ներից: Լ. Անանյանի խոսքով, աշնանը ՀՀ խորհրդարանն անդրադառնալու է այս հարցին, եւ ակնկալվող օրենսդրական փոփոխությունից հետո ինչպես Հայաստանի, այնպես էլ ԼՂՀ գրական կազմակերպությունները կվերաձեւավորվեն իբրեւ ստեղծագործական միություններ: Այս հիմամբ Լեւոն Անանյանը կոչ արեց առայժմ ձեռնպահ մնալ կանոնադրական փոփոխություններից, ինչը ԼՂՀ ԳՄ համագումարի օրակարգային հարցերից մեկն էր: Առաջարկությունը պատվիրակների կողմից ընդունվեց առանց առարկությունների:

Ըստ օրակարգի, տեղի ունեցավ ԳՄ նոր նախագահի ընտրություն: Միաձայն ԼՂՀ գրողների միության նախագահ վերընտրվեց Վարդան Հակոբյանը, որն այդ պաշտոնի միակ թեկնածուն էր: Տասնհինգ հոգանոց կազմով ընտրվեցին նաեւ ԳՄ վարչության նոր անդամները:

Որոշվեց հուլիսի 4-ին Երեւանում կայանալիք համագումարին ապահովել ՀԳՄ անդամ բոլոր արցախաբնակ գրողների մասնակցությունը: Ինչպես նշեց Լ. Անանյանը, տրանսպորտային հարցը կլուծվի ԼՂՀ նախագահի օժանդակությամբ, իսկ ղարաբաղյան պատվիրակների սննդի եւ օթեւանի հետ կապված հոգսերը կհոգա ՀՀ գրողների միությունը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Հայտնաբերվել են որսագողեր

Բնապահպանության նախարարությունից հաղորդում են, որ հունիսի 29-ի երեկոյան տեղեկություն ստանալով, որ Քաջարանի տարածաշրջանի «Գյոլ-գյոլ» լճի մերձակայքում անհայտ անձինք կատարում են որս, բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժանմունքի աշխատակիցները ոստիկանության Կապանի բաժնի ներկայացուցիչների հետ կազմակերպել են շուրջկալ: ԱԶ 2107 մակնիշի ավտոմեքենայի մեջ հայտնաբերվել են չորս միավոր հրազեն («կարաբին» տեսակի ակոսավոր ինքնաշեն եւ ողորկափող երկուական որսորդական հրացաններ), ինչպես նաեւ երկու բեզոարյան այծի մաշկազերծված մարմին: Սկսված է հետաքննություն, համապատասխան քայլեր են ձեռնարկվում որսագողության մասնակից՝ փախուստի դիմած այլ անձանց հայտնաբերելու համար:

# Փոխդային սակարանում

Հունիսի 30-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվել է 2100000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 360.25 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 360.25 դրամ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/30/2009 10:08 PM Page 1



# Ստրասբուրգյան կրքեր

*Երեկ մամուլի տարբեր ակումբներում նույն թեմայով ասուլիսներ էին տալիս ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանն** ու պատվիրակության անդամ **Արմեն Ռուստամյանը**:*

Ըստ Դ. Հարությունյանի՝ ԵԽԽՎ 1677-ը ամփոփիչ բանաձեւ է, ողջունվում է Հայաստանում տեղի ունեցող մեկուկես տարվա գործընթացը. «Ընդհանուր առմամբ վեհաժողովը



Դավիթ Հարությունյան

համարում է, որ ստեղծված է բավարար հենք, որ ընդլայնվի երկխոսությունը քաղաքական ուժերի միջեւ, իսկ մոնիտորինգը շարունակվելու է սովորական գործընթացով», ասաց՝ ավելի ուշ ավելացնելով, թե չի ընդունում ընդունված բանաձեւի՝ հաղթանակ կամ պարտություն լինելու վերաբերյալ հնչած գնահատականները. «Սա օբյեկտիվ գնահատական է իրավիճակին եւ առաջնահերթությունների սահմանում, որոնց պետք է հետեւենք», նկատեց նա, ինչի արդյունքում, ըստ նրա, եթե մինչեւ աշուն արտառոց ոչինչ չպատահի, աշնանային նստաշրջանում Հայաստանի հարցը չի քննարկվի: Թեեւ մինչ այժմ մամուլում ներկայացվել են նոր բանաձեւի հիմնական դրույթները, սակայն Դ. Հարությունյանի միջոցով ԵԽԽՎ-ի մի քանի կարեւոր անդրադարձները վերստին առանձնացնենք: Բանաձեւում դրական նշվել են տեղի ունեցած քրեական օրենսգրքի փոփոխությունները, միաժամանակ վեհաժողովն ուշադրություն է հրավիրել, որ քրեական օրենսգրքի փոփոխությունները կապ չունեին այն պահանջի հետ, որ պետք է դադարեցվեն միայն ոստիկանական ցուցմունքների հիման վրա մեղադրված մարդկանց քրեական հետապնդումները: Համաներումն է եղել երկրորդ կարեւոր արծարծված թեման, վեհաժողովը շարունակելու է մյուս գործերի ընթացքին հետեւել, ում վրա չի տարածվել համաներումը, ինչպես նաեւ հատուկ անդրադարձ է կատարել հետախուզման մեջ գտնվող անձանց եւ առաջարկել, որ այդ անձինք ներկայանալու դեպքում պետք է կալանքի չվերցվեն եւ դատավարության ժամանակ փաստորեն գտնվեն ազատության պայմաններում: Վեհաժողովն առաջարկում է նաեւ իշխանություններին ձեռնպահ մնալ՝ արդեն համաներվածների նկատմամբ վնասի հատուցման վերաբերյալ հայցերով քաղաքացիաիրավական պատասխանատվություն չկիրառել, քանի որ դա կնվազեցնի համաներման դերը:

Վեհաժողովն առանձին անդրադարձ է արել փաստահավաք խմբին եւ պնդում է, թե պետք է տեղի ունենա մարտիմեկյան իրադարձությունների առանձին ուսումնասիրություն՝ արժանահավատ եւ թափանցիկ պայմաններում, մարտի 1-ի դեպքերը քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը պետք է շարունակի աշխատել եւ անել առավելագույնը՝ համապատասխան ԵԽԽՎ ներկայացրած պահանջներին, ԺՀ-ի արդյունքներով էլ վեհաժողովը նոր անդրադարձ կանի, կգնահատի աշխատանքը՝ ասելով, թե լրացուցիչ ուսումնասիրություն պե՞տք է , թե՞ ոչ:

10 զոհվածների գործերն էլ, ըստ վեհաժողովի բանաձեւի անդրադարձի, դեռեւս պատշաճ ընթացք չեն ստացել եւ չեն հասցվել ավարտին, ինչը կոչ է անում իրականացնել ԺՀ-ի ուսումնասիրության ոլորտում:

Առանձին անդրադարձ կա հեռուստատեսության թվայնացմանը՝ որ առաջ հաճախականության մրցույթ եւս պահանջվում է: ԸՕ-ի բարեփոխումները եւս դիտվում են որպես առաջնահերթություն:

Իսկ ահա Արմեն Ռուստամյանը բանաձեւը երեկ գնահատեց հավասարակշռված՝ լավ ճանապարհային քարտեզ, որով հնարավոր է և՛ մարտի 1-ի էջը փակել, և՛ հետընտրական ճգնաժամը հաղթահարել, և՛ ընդհանրապես՝ մինչեւ հաջորդ ընտրությունները ընտրական լուրջ համակարգ ձեւավորել: Նա վերստին չխուսափեց համաներումը քաղաքական ուղղվածություն ունեցող համարել, ըստ այդմ էլ ելնելով նրանից, որ այն մարտի 1-2-ի իրադարձություններին էր առնչվելու, պիտի որ վերապահումներ չլինեին: Եթե ոչ ամբողջությամբ ներելու մասին էր խոսք գնում, գոնե չկրած պատժի մի մասը պետք էր կիսել, ինչը չի ընդունվել: Սա առիթ է երկակի ստանդարտներով մոտեցումների համար եւ նոր քննարկումներ կարող է սնել:

Զարուհի Փոստանջյանի թեմային երկու վեհաժողովականները այսպես արձագանքեցին: Դ. Հարությունյանը կարծում էր, որ ընդդիմության քաղաքական պլատֆորմը եւս պետք է արտացոլվի բանաձեւերում, դա նորմալ է, բայց նորմալ չհամարեց ստորագրություններ հավաքելիս թուրք եւ ադրբեջանցի այնպիսի պատգամավորներին դիմելը, որոնց դիրքորոշումը Հայաստանի հետ կապված շատ կանխակալ է: Ստորագրած պատգամավորները ոչ թե ձգտում են ժողովրդավարություն հաստատել, այլ իրենց ելույթներում նախկինում բազմիցս արտացոլել են ծայրահեղ ագրեսիվ դիրքորոշում՝ Հայաստանի հետ կապված: Կատարվածը նա սխալ համարեց. «Երբ մարդ մի սխալ է անում՝ լավ կլինի ընդունի, որ սխալ է, բայց այս դեպքում ոչ թե սխալն է ընդունվում, այլ փորձ է արվում հիմնավորել այն», ասաց: Զ. Փոստանջյանի վրա իշխանական շրջանակների կենտրոնացումն արդյոք նշանակո՞ւմ է, որ նա տապալել է մարտի 1-ի իրադարձությունները Դ. Հարությունյանի կողմից կոծկելը հարցին, այսպիսի պատասխան հնչեց. «Դա ոչ միայն մեծամիտ է, այլեւ կա վեհության մոլուցք (մանիա վելիչիյա). որովհետեւ ես չեմ հասկանում, թե ի՞նչն է տապալված՝ բացի 1-ից, մեր բոլոր առաջարկները վեհաժողովն ընդունել է, իսկ Զարուհին չի ընդունել»: Զ. Փոստանջյանի այն պնդման առիթով էլ, որ Հայաստանի պատվիրակությունը 30 արկղ կոնյակ է տարել,



Արմեն Ռուստամյան

նկարներ, Դ. Հարությունյանը շիտակ պատասխան տվեց՝ 6 շիշ կոնյակ ու 3 նկար՝ հանդիպումներին նվիրելու համար, դա էլ միջազգային պրակտիկայում ընդունված բան է:

Նա ժխտեց, թե ավելի վաղ ստորագրել է Ադրբեջանի ժողովրդավարական հաստատությունների մասին բանաձեւի տակ, ըստ նրա՝ Ստեփան Սաֆարյանը եւ Զ. Փոստանջյանը անտեղյակության պատճառով ապակողմնորոշում են լրագրողներին. «Այդ քվեարկությունը բոյկոտել ենք, որից հետո ես ու Ադոնցը առաջարկություններ ենք ներկայացրել, դրանք չեն ընդունվել, եւ դեմ ենք քվեարկել»:

Ա. Ռուստամյանն այս թեմայով ասաց, թե Զ. Փոստանջյանի գործելակերպը գուցե փորձառության պակասի հետեւանք է եւ սխալ, նա պետք է դա ընդունի, բայց նրա վերջին հայտարարությունները խոսում են այն մասին, որ նա ոչ միայն սխալը չի ընդունում եւ չի զղջում, այլեւ մի այլ ծայրահեղության մեջ է հայտնվել եւ սպառնում է կրկնել այն: Նա տեղեկացրեց, որ Զ. Փոստանջյանն իր առաջարկների տակ ստորագրություն դնելու համար իրեն էլ է դիմել: Բայց նա սովորություն չունի ստորագրելու այնպիսի նախաձեռնություններ, որոնց նախնական քննարկումներին չի մասնակցել, իսկ ավելի հիմնական պատճառն այն է, որ Ռուստամյանն իրեն չի պատկերացնում մի թիմում տիկին Հաջիբեյլիի հետ (սա կատաղի հակահայկական կեցվածքով հայտնի պատվիրակ է- Մ. Խ.):

Իսկ Ա. Ռուստամյանի առաջարկը, որը 7 պատվիրակ է ստորագրել Ստրասբուրգում, ընդունվել է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# 3 ուսանողներ արժանացել են «Արամ Այվազյան» մրցանակին

Կանադայում գործող «Զորյան ինստիտուտից» ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ամփոփելով ավագ դպրոցականների միջեւ հայտարարված «Արամ Այվազյանի անվան ցեղասպանության թեմայով էսսեների մրցույթի» արդյունքները, հունիսի 19-ին ժյուրին պարգեւատրել է 11-րդ դասարանցիներ՝ Էյմի Չիթիլյանին (1500 դոլար), Նարե Ղալուստյանին (1250 դոլար) եւ Միսաք Բոյաջյանին (1000 դոլար): Առաջին մրցանակի արժանացած Էյմի Չիթիլյանը գրել է. «Որո՞նք էին կոտորածների դրդապատճառները եւ ինչո՞ւ ցեղասպանություն էր» թեմայով: Նարե Ղալուստյանը ընտրել է «Հայերի ցեղասպանության պարտադիր ճանաչումը» թեման, իսկ Միսաք Բոյաջյանը՝ «Հայերի ցեղասպանությունը եւ մարդկության շարունակական ձախողումը՝ կանխարգելելու այն» թեման:

Ծրագիրը նպատակ ուներ հավերժացնելու Արամ Այվազյանի հիշատակը: Նա «Զորյան ինստիտուտի» գործունեության երկարամյա ջատագովներից է եղել եւ հայկական համայնքի ակտիվ անդամներից, որոնք լուրջ պայքար են մղել ցեղասպանության բոլոր տեսակի ժխտողական դիրքորոշումների դեմ:

«Այվազյան ընտանիքը չափազանց զգացված է, որ նման իմաստալի միջոցառումով մեծարվում է մեր սիրելի հայրիկը, ով հպարտանալու էր այս երեք ուսանողների հաջողություններով, եթե այստեղ լիներ այսօր», նշել է «Զորյան ինստիտուտի» հիմնադիր անդամներից պրոֆ. Վարուժ Այվազյանը:

Շնորհակալություն հայտնելով մրցանակի արժանանալու առթիվ, Էյմի Չիթիլյանը ասել է. «Մրցույթը հնարավորություն տվեց վերլուծության միջոցով ապացուցելու, որ հայերի կոտորածները պետք է որակվեն ցեղասպանություն: Հուսով եմ, ծրագիրը կշարունակվի եւ ուրիշ ուսանողներ էլ առիթ կունենան իրենց ներդրումը կատարելու այս հարցում»:

Հ. Ծ.

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՍՈՒԼԻՍ

# «Այն միլիոնները, որ պետք է մտնեին համայնքային բյուջե, մի մասը գնար պետական բյուջե, չգիտես՝ ուր են գնացել եւ ում գրպանը»

*1-ին էջից*

Իշխան Զաքարյանի զարմանքը հատկապես առաջացրել է Արմավիրի մարզում հողերի վաճառքի ընդունված ավանդույթը. «Այն միլիոնները, որ պետք է մտնեին համայնքային բյուջե, մի մասը գնար պետական բյուջե, չգիտես՝ ուր են գնացել եւ ում գրպանը: Սա ես վստահ եմ ասում, որովհետեւ չի կարող պատահել, որ մեկ, հինգ կամ տասնինը օրվա ընթացքում, օրինակ, 40 հեկտար հողը 850 հազարով վաճառվեր եւ, ասենք, 26 օր հետո երկրորդ վաճառքը լինի 21 միլիոն դրամ: Կամ 60 հեկտար հողը վաճառվեր 6 միլիոն դրամով, ընդամենը 5 օր հետո վաճառվեր 23,4 միլիոն դրամով»:

Նա նշում է, որ, օրինակ, Փարաքար գյուղում կազինոների եւ կահույքի խանութների համար վաճառվել է հող մեկ քառակուսի մետրը 6,7 դրամով:

Այդ ուսումնասիրությունը, որ կատարել է Վերահսկիչ պալատը, ներառում է Արմավիրի մարզպետարանի 2007-08 թվականների գործունեությունը: Այդ ընթացքում Արմավիրում մարզպետ է փոխվել՝ Ալբերտ Հերոյանին փոխարինել է Աշոտ Ղահրամանյանը:

Վերահսկիչ պալատը չի տալիս անուններ, թե էժան հողերն ում են վաճառվել: Փոխարենը նշում է երկու ընկերություն՝ «Արաքս ավազան» ՍՊԸ եւ «Վինեկ» ՍՊԸ, որոնց մեկ հեկտարը 25 հազար դրամով հող են վաճառել գյուղմթերքներ արտադրելու համար, սակայն դրա փոխարեն այդ հողում սկսել է արդյունահանվել սեւ ավազ, այսինքն՝ գյուղմթերքի արտադրության տակ կատարվել է հանքի վաճառք: Իսկ սեւ ավազի մեկ մեքենան արժե 25-30 հազար դրամ:

Այս ամենը լսելուց հետո նիստին ներկա պատգամավորներին հետաքրքրում էր, թե ինչ միջոցներ են ձեռնարկվելու չարաշահումներ թույլ տված պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու համար: Ըստ Իշխան Զաքարյանի՝ իրենք այդ հարցում իրավասու չեն: Վերահսկիչ պալատի հաջորդ նիստը նույնպես լինելու է աղմկահարույց: Դրա նախադրյալներն արդեն կան, ասում է Իշխան Զաքարյանը:

Մասնավորապես՝ նյութեր են պատրաստվում Փարաքարի ճանապարհին գործող կազինոների վերաբերյալ. «Կազինոների լիցենզիաներ ունենալ- չունենալու հետ կապված նախ ասեմ, որ բավականին լուրջ խախտումներ կան, ես ընդամենը այսքանը կասեմ»:

Սոցիալական ծառայությունների աշխատանքը նույնպես հրավիրել է Վերահսկիչ պալատի ուշադրությունը. «Արմավիր, Էջմիածին եւ այլ քաղաքներում մոտավորապես 8-12 տոկոս է խախտումը, գյուղերում՝ 18- 22 տոկոս: Հիմնականում կեղծ տեղեկանքների հիման վրա մարդկանց ընդգրկում են ցուցակներում եւ տալիս են նպաստներ: Եթե մոտավորապես մենք այս տոկոսների հետ ենք գործ ունենում, դուք պատկերացրեք՝ բյուջեից քանի միլիարդ ուր է գնում»:

Ուսումնասիրված այլ ոլորտներում՝ Սահմանադրական դատարանի եւ գլխավոր դատախազության կողմից պետբյուջեից հատկացված միջոցների օգտագործման առումով ֆինանսական չարաշահումներ չեն հայտնաբերվել: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում բացահայտված խախտումները պետբյուջեին կտան 444 միլիոն դրամի օգուտ:

Վերահսկիչ պալատի ուսումնասիրության տվյալով, որ վերաբերում է 2007-2008 թվականներին դատախազության եւ սահմանադրական դատարանի ֆինանսատնտեսական գործունեությանը, ամեն ինչ այդ կառույցներում կարգին է, գրեթե անթերի:

«Սահմանադրական դատարանում ընդհանրապես որեւէ բան չկա, այսինքն՝ շատ մաքուր էր տնտեսությունը, ֆինանսատնտեսական դաշտը մաքուր էր», ասում է Իշխան Զաքարյանը: Ըստ նրա, կան միայն ընթացակարգային խախտումներ:

Լրագրողների հարցին, թե տարատեսակ ուսումնասիրություններով դատախազությունը համարվում է Հայաստանի ամենակոռումպացված կառույցներից մեկը, այդ ինչպե՞ս է ստուգել Վերահսկիչը, որ խախտում չի գտել, Իշխան Զաքարյանը պատասխանեց. «Մենք նայում ենք միայն պետական բյուջեից ստացված միջոցները, պետական բյուջեից ինչի համար են գումար տվել: Եվ վերջ: Եթե գումար են տվել, այնտեղ մոտ 90 տոկոսը գնում է աշխատավարձի, իր ամբողջ համակարգով՝ աշխատավարձ, ապարատի պահպանում, չգիտեմ, հոսանք, ջուր: Ինչ որ պետք է ապարատի համար: Մենք այս մասով ենք ասում, որ խախտումներ ֆինանսական չկան»:

Ն. Ս.

# «Լավանդա-սիթիի» հետ կապված չարաշահումները

Ինչո՞ւ «Լավանդա-Սիթիի» հետ կապված չարաշահումների նյութերը, որ Վերահսկիչ պալատը հայտնաբերել էր 2008 թվականին՝ ուսումնասիրելով Սեւանի քաղաքապետարանը, չեն ուղարկվել դատախազություն: Լրագրողներն այդ հարցը երեկ մամուլի ասուլիսի ընթացքում տվեցին ՎՊ նախագահ **Իշխան Զաքարյանին**: Ըստ նրա՝ իրենք «Լավանդա-սիթին» չեն ուսումնասիրել, այլ Սեւանի քաղաքապետարանը, եւ հայտնաբերել են, որ «Լավանդա-սիթիին» կատարվել է բավական էժան հողահատկացում, խախտումներ են եղել նաեւ հարկեր մուծելու առումով:

«Այդ մասին առաջին անգամ ես խոսեցի Գեղարքունիքի մարզի արտագնա նիստի ժամանակ, երբ քննարկում էինք: Ես ընդամենը ասեցի հետեւյալը, որ մենք ուսումնասիրել ենք Սեւանի քաղաքապետարանի գործունեությունը եւ տեսել ենք, որ 14 դրամով հողերը հատկացրել են «Լավանդա-սիթի» քաղաքի կազմակերպման համար: Եվ երկրորդ, ասել ենք, որ տնակների վաճառքից կան բավականին խնդիրներ, որոնք մեզ հիմք են տալիս ասելու, որ հարկային դաշտից խուսափել են: Այս առումով մեր ամբողջ նյութերն ուղարկել ենք պետական եկամուտների կոմիտե, ՊԵԿ-ում հիմա ուսումնասիրում են այդ գործընթացը, եթե պաշտոնական լուր ստանանք, բնականաբար ձեզ կտեղեկացնենք», ասում է Իշխան Զաքարյանը: Լրագրողները, սակայն կրկնեցին հարցը, որ եթե ստուգվել է Սեւանի քաղաքապետարանը, ապա ինչո՞ւ գործը չի գնացել դատախազություն:

«Այս նույն տրամաբանությամբ, անընդհատ կարող եք դուք ձեր հարցը կրկնել, ես՝ իմ պատասխանը: Դուք ասացիք, ես պատասխանեցի: Ձեզ չի բավարարում, դա ուրիշ խնդիր է: Ես ձեզ ընդամենն ասում եմ, մենք դա չենք ստուգել, այդ կառույցը չենք ստուգել: Եթե ստուգեինք, բնականաբար մեր վերաբերմունքը... Ես ընդամենն ասել եմ՝ հարկային դաշտից խուսափել է, եւ վերջ», ասում է Իշխան Զաքարյանը:

Ն. Ս.

# Խալդ աստծո տաճարը մեր պատմության հնագույն շրջանի նոր շերտեր է բացում



Էրեբունի ամրոց այցելած կորեացի զբոսաշրջիկը դես ու դեն էր վազվզում, մոլորվել էր ու չէր կարողանում գտնել ամրոցից դուրս բերող ճանապարհը: Հարց ու փորձ արեց ոչ միայն ճանապարհի, այլեւ որտեղացի լինելուս մասին, արդեն նկատած լինելով, որ ամրոցում շրջողները հիմնականում օտարներ են: Նրա առաջ ինձ մեղավոր զգացի ամրոցի ավերակ եւ անխնամ վիճակի համար: Ոչ մի ցուցանակ ոչ մի լեզվով չես գտնի ամրոցում, ասես ուրարտական մշակույթը ոչ մի առնչություն չունի մեր երկրի ու պատմության հետ, ասես մենք չենք մշակութային ժառանգորդները, այլ քոչվոր ցեղերի այն հրոսակախմբերը, որոնք որտեղից որտեղ եկել ու տեր են կանգնել Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող ուրարտական բազմաքանակ հուշարձաններին, թանգարաններ են ստեղծել եւ իրենք իրենց իրական ժառանգորդներ հռչակել:

Խորհրդային տարիներին Էրեբունի ամրոցում կատարված պեղումները շատ արագ ավարտվել էին 1968 թվականին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ Էրեբունի - Երեւանի 2750-ամյակը տոնելու կապակցությամբ, եւ ամրոցի պատմության հետ կապված բազում հարցեր մնացել էին անպատասխան: Երեք տարի առաջ ամրոցի հանդեպ առանձնակի հետաքրքրություն դրսեւորեցին Ֆրանսիայի հնագիտական կենտրոնի հնագետները, սկսեցին տարբերաբար այցելել, զննել, պեղել, բայց բացահայտումներ անել հաջողվեց միայն այս տարի: Թերեւս պատճառն այն էր, որ այս անգամ որոշել էին պեղումները սկսել Խալդ աստծո տաճարից արեւելք ընկած հատվածից:

Հայաստանցի հնագետները տարբեր առիթներով նշել են, որ խորհրդային տարիներին ամրոցը բավականին մակերեսորեն է պեղվել, կան չբացահայտված մի քանի շերտեր, որոնք չափազանց կարեւոր նշանակություն կարող են ունենալ ամրոցի մասին լիարժեք տեղեկություններ ունենալու առումով: Այդ շերտերից մեկը բացահայտելու բերկրանքն այս տարի վերապահված էր ֆրանսիացիներին, որոնք ներկա պահին մեկնել էին իրենց հանգիստը վայելելու եւ կվերադառնան սեպտեմբերին՝ ամերիկացի եւ հայաստանցի գործընկերների հետ հաջորդ տարվա ծրագրերը քննարկելու:

Էրեբունի թանգարանի տնօրեն **Աշոտ Փիլիպոսյանի** հետ զրուցեցինք ամրոցում կատարվող պեղումների, ուրարտագիտական կենտրոն ստեղծելու անհրաժեշտության, ամրոցի պահպանության հանդեպ մեր անփույթ վերաբերմունքի եւ այլ հարցերի մասին: «Նախ ասեմ, որ թանգարանը համագործակցում է Պետերբուրգի Էրմիտաժի, Մ. Նահանգների Բերկլիի համալսարանի եւ Ֆրանսիայի հնագիտական կենտրոնի հետ: Ֆրանսիացիներն արդեն մի քանի տարի տարբերաբար գալիս են, բայց այս տարի նրանց հետ մեր համատեղ աշխատանքն ավելի արդյունավետ էր: Խալդ աստծո տաճարից դեպի արեւելք ընկած հատվածում շատ հետաքրքրական շերտ բացվեց: Տեսանելի է խորհրդային շրջանում պեղված շերտը՝ ծածկված չոր խոտով, կարծես բաժանարար գիծ է դարձել: Այդտեղ բացվեց խորան տանող ճանապարհ, խորանը քառաշար է, վերեւի հատվածում՝ աղյուսաշար, ունի կիսակլոր վերջույթ, ներսում՝ կենդանիների ոսկորների մնացորդներ: Հավանաբար այնտեղ ծիսական արարողություններ են եղել, այդ հատվածին դեռ ոչ մեկը չէր դիպել: Հետաքրքրական է, որ այդ նույն խորանի առջեւով անցնում է ջրահեռացման խրամատ, փորված գետնի մեջ, քարեծածկ: Այս փուլում, երբ աշխատանքը մոտենում էր ավարտին, խողովակի եզրին բացվեց ուրարտական շրջանի քարե արտաքնոց: Ֆրանսիացիներին սկզբում թվաց, թե դա ջուր հավաքելու տեղ է, բայց ինձ ծանոթ պատկեր էր, որ տեսել էի Արեւմտյան Հայաստանում՝ Չաուշ Թափեում: Լուսանկարները համադրելով համոզվեցինք, որ իսկապես արեւելյան տիպի արտաքնոց է, ուրարտացիներն այն օգտագործել են Քրիստոսի ծննդից 2 հազար եւ ավելի տարիներ առաջ: Սա նշանակում է, որ հնավայրում բացվում է մի նոր շերտ, որն անկասկած երկրորդ կառուցապատման հետեւանք է՝ Արգիշտի թագավորից հետո արված: Ըստ երեւույթին այդտեղից մուտք է եղել, որը հետագայում փակվել է եւ օգտագործվել է այլ նպատակներով: Հետաքրքրական է, որ մուտքի երկու կողմերից որմնահեցերով պատեր են երեւում, հավանաբար, տոնահանդեսային մուտքի հատվածներից մեկն է եղել: Պեղումները շարունակվելու են, ֆրանսիացիներից հետո մեր խումբը կպեղի բլրի արեւմտյան լանջը, որտեղ անցած տարի մի սենյակ էր բացվել ու կիսատ թողնվել: Այն պարսպից դուրս է, իսկ դա նշանակում է, որ պեղումներից հետո պարսպի գծագրությունը կարող է փոխվել: Սենյակում գտնվել են Քրիստոսի ծննդից առաջ 7-րդ դարի խեցեղենի բեկորներ, սենյակի ընդամենը մի մասն է բացված, դեռ բավականին գործ կա անելու: Սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերին թանգարան կգա Բերկլիի համալսարանի հնագետ Դեյվիդը՝ պեղելու Խալդ աստծո տաճարի մյուս թեւը, որը ֆրանսիացիները դեռ չեն պեղել: Այս ամենը հույս է տալիս, որ հայ, ֆրանսիացի եւ ամերիկացի հնագետների աշխատանքների արդյունքում կունենանք ամրոցի նոր պատկեր: Հավելեմ նաեւ, որ արշավախմբի հետ աշխատում են էրմիտաժի երկու հնագետներ, որոնցից մեկը ուրարտական հավաքածուի գլխավոր ֆոնդապահն է: Այսպիսի սերտ համագործակցությունը թույլ է տալիս ասել, որ 3 տարի անց ամրոցի պատմության մասին բավականին հարուստ նյութ ենք ունենալու», ասաց թանգարանի տնօրենը:



Արշավախմբի ղեկավարն ինքն է, համաղեկավարները՝ ֆրանսիական եւ ամերիկյան խմբերի առաջնորդները: Վերջիններս պեղումները կատարում են իրենց միջոցներով, իսկ հայկական խումբը՝ թանգարանի ստացած մեկ մլն դրամ հանրապետական դրամաշնորհով, հատկացված գիտության եւ կրթության նախարարության կողմից:

Աշոտ Փիլիպոսյանը կարծում է, որ պեղումների շնորհիվ ամրոցի նոր շերտերը բացահայտելու հետ մեկտեղ չափազանց կարեւոր է Էրեբունի թանգարանի հիման վրա ուրարտագիտական հետազոտությունների կենտրոն ստեղծելը: «Վերջին 3 տարիներին հաճախակի եմ մեկնում Արեւմտյան Հայաստան, զննում եմ Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող բոլոր ուրարտական հուշարձանները, 10 հազարից ավելի լուսանկարներ եմ արել, այցելել եմ թանգարաններ եւ անկեղծորեն պիտի ասեմ, որ Թուրքիայում շատ լուրջ են զբաղվում ուրարտագիտությամբ թե՛ հնագետները, թե՛ լեզվաբաններն ու պատմաբանները: Եթե այժմեն իսկ մեր ուժերը չկենտրոնացնենք, 20 տարի անց, մեր սերնդից հետո, հայ ժողովրդի պատմության ու մշակույթի այս լավագույն հատվածը մեր հարեւան երկիրն է ներկայացնելու: Թուրք մասնագետներն այնպիսի շեշտադրումներ են անում, որոնք կարիք ունեն համակողմանի մոտեցման: Եթե այսօր միջոցներ չգտնենք ուրարտագիտության կենտրոն բացելու համար, հետեւանքներն անդարձ են լինելու», հավելեց Փիլիպոսյանը:

Մշակույթ յուրացնելու բացառիկ տաղանդ ունեցող մեր հարեւանների վտանգավոր գործունեությունը, կարծում ենք, պիտի ողջամտության դասեր տա մեր պետական այրերին՝ հնարավորինս արագ կողմնորոշվելու եւ Էրեբունի ամրոցի արտաքին ու ներքին հարդարանքը պատշաճ մակարդակի վրա դնելու համար:

**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Գնահատվում է Ցվետանա Պասկալեւան

## *ՀԲԸՄ «Կարպիս Փափազյան» 24-րդ մրցանակի հանձնումը հուլիսի 3-ին*

«Ազգ»-ն արդեն տեղեկացրել է, որ հուլիսի 3-ին, ժամը 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Հայկական բարեգործական ընդհանուր միության «Կարպիս Փափազյան» մրցանակի հանձնումը հայտնի բուլղարուհի ռեժիսոր, օպերատոր, կինովավերագրող եւ հեռուստալրագրող Ցվետանա Պասկալեւային: Ավստրիացի հայ բարերար Կարպիս Փափազյանի կողմից շնորհվող այս մրցանակը տրվում է այն օտարազգի մտավորականներին ու գործիչներին, ովքեր իրենց օժանդակությունն են բերում հայ ժողովրդի պատմության, մշակույթի, արվեստի տարածմանն ու Հայկական հարցի քարոզչությանը: 1988 թվականից այս մրցանակին են արժանացել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի 24 հայտնի մտավորականներ, այդ թվում՝ Թեսա Հոֆմանը, Հերման Գոլցը եւ Վոլֆգանգ Գուստը Գերմանիայից, Քրիստոֆեր Ուոքերն ու բարոնուհի Քերոլայն Քոքսը Մեծ Բրիտանիայից, Կիմ Բակշին Ռուսաստանից, Ահմադ Նուրիզադեն Իրանից, Իվ Թերնոնն ու Անդրե Սանտինին Ֆրանսիայից:



Ցվետանա Պասկալեւան 1991-1994-ին լինելով Լեռնային Ղարաբաղում, լուսաբանել է արցախյան հերոսամարտը, Ղարաբաղի հիմնախնդիրը ներկայացրել միջազգային հանրությանը: Նա առաջին արտասահմանցի լրագրողն է, որ «Օղակ» գործողության ժամանակ եղել է Շահումյանի շրջանում, հայ բնակչության դեմ կատարվող բռնարարքների, տեղահանության վերաբերյալ պատրաստել ռեպորտաժներ, դրանք ցուցադրել տարբեր երկրներում: Ռազմաճակատի թեժ կետերից հեռուստահաղորդումներ է պատրաստել CNN, NBC, բուլղարական ազգային, ռուսական, գերմանական, ֆրանսիական Antene-2 հեռուստաընկերությունների եւ Ռոյթեր գործակալության համար:

Ցվետանան ծնվել է բուլղարական Նովա Զագորա քաղաքում, 1984-ին ավարտել է Մոսկվայի թատերական արվեստի պետական ինստիտուտը, ապա սովորել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Նա եղել է նաեւ Հարավային Օսիայում, ակտիվորեն լուսաբանել 1990-ի վրաց-օսական հակամարտությունը, նկարահանել 10 հեռուստառեպորտաժներ եւ «Հարավային Օսիա. երկու ժողովուրդների ցավը» վավերագրական ֆիլմը:

Նա նկարահանել է պատերազմական իրադարձություններին, արցախյան ազատագրական պայքարին նվիրված «Ղարաբաղի վերքերը» վավերագրական ֆիլմը՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով:

1991-1995-ին նկարահանել է «Հույսի բարձունքներ» (1991), «Կլինի՞ առավոտ Ղարաբաղում» (1992), «Իմ թանկագին ողջեր եւ մեռածներ» (1993), «Ղարաբաղի վերքերը» (1994), «Իրենց հողի զինվորները» (1994), «Անդորր» (1995) ֆիլմերը, որոնք արժանացել են Ժնեւի (1992), Հոլիվուդի (1993), Օհայոյի, Վերմոնտի (ԱՄՆ, 1994) միջազգային կինոփառատոների մրցանակների: 2001-ին նկարահանել է Շուշիի ազատագրմանը նվիրված «Ոգի եւ հավատ» փաստավավերագրական ֆիլմը:

Հուլիսի 3-ի երեկոյի ընթացքում կցուցադրվի նրա «Իմ թանկագին ողջեր եւ մեռածներ» ֆիլմը, իսկ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ կհնչի Ավետ Տերտերյանի թիվ 3-րդ սիմֆոնիան: Մրցանակը հանձնելու նպատակով Ավստրիայից Երեւան կժամանի «Կարպիս Փափազյանի» մրցանակի ժյուրիի ներկայացուցիչ, ճարտարագետ Ռազմիկ Հարթունյան-Թամազյանը, ինչպես նաեւ ներկա կգտնվեն ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամներ:

Ցվետանա Պասկալեւան 1993-94-ին ԱՄՆ-ի Կոնգրեսում, Կանադայի խորհրդարանում, ՄԱԿ-ում, «Միջազգային համաներում» եւ այլ կազմակերպություններում ցուցադրել է իր ֆիլմերը, ելույթներ ունեցել ի պաշտպանություն արցախահայության ազատագրական պայքարի: Ադրբեջանի իշխանությունները Պասկալեւային 3 անգամ հեռակա կարգով դատապարտել են մահապատժի:

2009-ի մրցանակը Ցվետանա Պասկալեւային է շնորհվել արցախահայության պայքարի ճշմարտացի եւ ամբողջական լուսաբանման իր քաջության, ինչպես նաեւ Հայաստանին անմնացորդ նվիրվածության համար:

1995-97-ին Հայաստանի ազգային հեռուստատեսությունում վարել է Արցախի անցյալին ու ներկային նվիրված «Իմ թանկագին ողջեր եւ մեռածներ», 1998-2001-ին՝ Հայաստանի եւ ԼՂՀ խնդիրների շուրջը՝ «Ասպեկտ» հեղինակային հրապարակախոսական-վերլուծական հաղորդաշարերը: 2009-ից Հայաստանի Հանրապետության «Արարատ» հեռուստաալիքով եթեր է հեռարձակվում Պասկալեւայի «Ճառագայթ» նոր հեղինակային ծրագիրը:

Պասկալեւան Կինովավերագրողների միջազգային ընկերակցության (Լոս Անջելես, ԱՄՆ), Հայաստանի եւ Բուլղարիայի ժուռնալիստների միությունների, Հայաստանի եւ Բուլղարիայի կինեմատոգրաֆիստների միությունների անդամ է:

Պասկալեւային շնորհվել է Արցախի գրողների միության «Եղիշե» մրցանակ, պարգեւատրվել է ՀՀ «Արիություն» մեդալով, Ղարաբաղի պաշտպանության բանակի գնդապետ է (1995):

AZG NEW 5.QXD 6/30/2009 10:07 PM Page 1



# Հայաստանը պարգեւատրեց հակահայ ու անհեռանկար վրաց նախագահին՝ ակնկալիքներո՞վ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու այցը Հայաստան միանշանակ չէր հենց Հայաստանի ու հայերի համար, ուր մնաց այս տարածաշրջանով ու դրանում տարբեր երեւույթներով հետաքրքրվողների համար: Բնական էր, որ Ռուսաստանից պիտի լինեին արձագանքներ, ավելին, բացասական, միեւնույն ժամանակ, դրանք հաստատապես չէին ինչի բարձր մակարդակով, ինչպես եւ պատահեց:

Ռուսաստանի արձագանքները Սաակաշվիլու Հայաստան այցին, ըստ «Արմաս» ակումբում հյուրընկալված «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն Հայկազուն Ալվրցյանի, կոշտ չէին ընդհանուր առմամբ ու ամենայն հավանականությամբ ոչ մի բանի էլ չեն հանգեցնի:

Դրա փոխարեն Ալվրցյանը, անդրադառնալով Հայաստան-Վրաստան հարաբերություններին, գտնում է, որ Վրաստանի նախագահին շքանշանով պարգեւատրելը ճիշտ չէր բոլոր առումներով: Հայաստանի իշխանությունները, ըստ մասնագետի, այսպիսով պարզունակ քայլ են արել, ավելորդ քայլ, որ հաջողված չէ ոչ բարոյական, ոչ էլ քաղաքական տեսանկյուններից:

Բարոյական առումով մի տեսակ ստացվում է, որ Սաակաշվիլուն պարգեւատրում են Հայաստանում, մինչդեռ իր երկրում նրա քայլերը հակահայ են՝ ոչ միայն Ջավախքի ու թիֆլիսահայության դեմ ուղղված, այլեւ հաճախ ոչ կոռեկտ արտահայտությունների ձեւով՝ նաեւ Վրաստանի: Ավելին, Ալվրցյանի կարծիքով, Ջավախքը հայաթափելու ծրագիր մշակող Սաակաշվիլուն շքանշան տալը վատ արձագանք կունենա հենց Ջավախքում:

Ինչ վերաբերում է շքանշան տալու սխալականության քաղաքական տեսանկյունին, ապա այդ առնչությամբ հիմնադրամի տնօրենը գտնում է, որ պարգեւատրվել է մեկը, որ հեռանկար չունի որպես քաղաքական գործիչ, ավելին, ունի իշխանություն պահելու խնդիր: Մի խոսքով, ում-ում, բայց Սաակաշվիլուն պետք չէր, ըստ Ալվրցյանի, պարգեւատրել:

Մյուս կողմից, «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» հիմնադրամի տնօրենը կարծում է, թե Արեւմուտքը Սաակաշվիլուն պաշտպանելու մտադրություն այլեւս չունի, Վրաստանի ներսում էլ երկրի նախագահին չեն աջակցում, ու այդկերպ կարծես Վրաստանը վտանգ է զգում ՆԱԲՈՒԿԿՈ-ի ծրագրի չիրականանալուց, հայ-թուրքական սահմանի բացման դեպքում Կարս-Ախալքալաք երկաթգծի նախագծի լրջորեն վնասվելուց, հայ-իրանական հարաբերությունների ու հաղորդակցության ուղիների զարգացումից եւ այլն:

Վրաստանը այս ամենի ֆոնին, ըստ Ալվրցյանի, հետաքրքրություն է սկսում ցուցաբերել Հայաստանի հանդեպ: Հատկապես որ, հիմնադրամի տնօրենի խոսքերով, Վրաստանի մերձավոր գործընկերներ Թուրքիան եւ Ադրբեջանը հենց Վրաստանի ներսում լուրջ խնդիրներ են առաջացնում, ի դեմս Վրաստանի մեծապես ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի նահանգի, քանի որ Թուրքիան եւ Ադրբեջանը ոչ միայն կրթական ու մշակութային աջակցություն են ցուցաբերում նահանգի բնակչությանը, այլեւ ֆինանսական օժանդակություն տարբեր հարցերում:

Միեւնույն ժամանակ, ինչ էլ լինի, Ալվրցյանի հավաստիացմամբ, «վրացիները վստահելի գործընկեր չեն»: Հայաստանի կառավարությունն էլ սխալմամբ ակնկալում է, թե վրացիները կարող են լինել վստահելի գործընկեր ու լինել ավելի հայամետ տրամադրված: Եվ այս ամենով հանդերձ, Հայկազուն Ալվրցյանի վստահեցմամբ, ինչպես Հայաստանը, այնպես էլ Վրաստանը պետք է գիտակցեն ու հասկանան, որ գտնվում են թուրքական ամբողջացող օղակի մեջ եւ դրան կարող են դիմակայել միայն միասին:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Դեպի Եվրոպա՝ ամբողջական, ազատ եւ խաղաղ

## *Գործող նախագահի այցը Հայաստան*

**Իմ այցը Հայաստան՝ որպես ԵԱՀԿ գործող նախագահի, տեղի է ունենում մեր կազմակերպության համար բարդ մարտահրավերների եւ մեծ հնարավորությունների ժամանակաշրջանում: Միայն նախորդ շաբաթվա վերջին ԵԱՀԿ արտգործնախարարները, այդ թվում նաեւ իմ գործընկեր արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, Հունաստանի նախաձեռնությամբ հանդիպեցին Կորֆու կղզում՝ եվրոպական անվտանգության ներկան եւ ապագան քննարկելու:**

**Այս ոչ պաշտոնական հանդիպումը կարեւոր հնարավորություն էր մեզ համար՝ ընդհանուր մտահոգությունների վերաբերյալ մեր երկխոսությունը խորացնելու եւ 21-րդ դարի Եվրոպայի անվտանգության մարտահրավերներին առավել արդյունավետ արձագանքելու համար: Մենք պե՛տք է օգտագործենք այս պահը:**

**Ձգձգվող հակամարտությունները շարունակում են ստվեր նետել մեր տարածաշրջանի վրա՝ մի փաստ, որի մասին բոլորդ քաջատեղյակ եք: Այնուամենայնիվ, այստեղ առաջընթաց է նկատվում: Նախքան Կորֆու ժամանելը նախարար Նալբանդյանը եւ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովն ու Մինսկի համանախագահները հանդիպեցին Փարիզում: Միայն այս տարվա ընթացքում հինգ հանդիպում է տեղի ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ՝ այս հանդիպումից առաջ:**



**Խրախուսելի են բանակցային գործընթացի վերջին զարգացումները եւ տեղի ունեցած կառուցողական քննարկումները: Այս քննարկումները դրական ընթացք են ստացել եւ դրանք շարունակելը կարեւոր է: Ես լիովին աջակցում եմ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին, ինչպես նաեւ իմ անձնական ներկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպրչիկի՝ վստահության ձեւավորման աշխատանքներին: Սակայն շարունակում են մտահոգություն առաջացնել տեղի ունեցած միջադեպերը: Ես կոչ եմ անում երկու կողմերին էլ լիարժեք կատարել հրադադարի համաձայնության դրույթները եւ շփման գծից հեռացնել դիպուկահարներին, ինչպես առաջարկել էին համանախագահները:**

**Ինձ նաեւ ոգեւորում է ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի եւ Հայաստանի միջեւ համագործակցության բարձր մակարդակը մի շարք ուղղություններով, այդ թվում՝ գրասենյակի երկարատեւ համագործակցությունը ՀՀ ոստիկանության հետ, ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու միջոցառումները եւ աջակցությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին:**

**Ոգեւորիչ է, որ Ազգային ժողովը նախաձեռնել է ընտրական օրենսդրության բարեփոխումներ, որը շարունակում է գերակայություն լինել: ԵԱՀԿ-ն եւ նրա Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը /ODIHR/ պատրաստակամ են աջակցելու Հայաստանին՝ ընտրական ընթացակարգերն է՛լ ավելի բարելավելու հարցում: ԵԱՀԿ-ն եւ Հայաստանը պետք է նաեւ շարունակեն համատեղ աշխատանքը՝ լրատվամիջոցների եւ խաղաղ հավաքների ազատությանը օժանդակելու ուղղությամբ: Բաց երկխոսությունը, առողջ քաղաքացիական հասարակությունը եւ ազատ մամուլը խիստ կարեւոր են ժողովրդավարական գործընթացների համար եւ այն հիմնական պարտավորություններն են, որ մենք ստանձնել ենք որպես ԵԱՀԿ մասնակից պետություններ:**

**Հայաստանը առանցքային դեր է խաղում Հարավային Կովկասում եւ ողջ ԵԱՀԿ տարածքում անվտանգություն եւ կայունություն խթանելու հարցում: Այս համատեքստում ողջունում եմ ՀՀ կառավարության ջանքերը՝ Թուրքիայի հետ երկկողմանի հարաբերությունները նորմալացնելու ուղղությամբ:**

**Ինչպես պարզ դարձավ Կորֆուում ընթացող մեր քննարկումներից, առաջընթաց ենք արձանագրել «ամբողջական, ազատ եւ խաղաղ Եվրոպա» կառուցելու ուղղությամբ, այնուամենայնիվ դեռեւս բավականաչափ աշխատանք պետք է կատարել. անվտանգության նոր մարտահրավերները կփորձարկեն մեր հավատարմությունը անբաժանելի անվտանգությանը: Ակնկալում եմ շարունակել Կորֆուում սկսված մեր արդյունավետ երկխոսությունը այս այցի ժամանակ:**

**ԴՈՐԱ ԲԱԿՈՅԱՆՆԻՍ**
**Հունաստանի արտաքին գործերի նախարար, 2009 թ. ԵԱՀԿ գործող նախագահ**

# Եմենական աերոբուսը ընկել է Հնդկական օվկիանոսը



Եմենի ավիաընկերությանը պատկանող A 310-300 աերոբուսը հունիսի 30-ի առավոտյան Եմենից Կոմորյան կղզիներ թռչելիս ընկել է Ատլանտյան օվկիանոսի մեջ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով Եմենի քաղաքացիական ավիացիայի վարչության ներկայացուցիչներին:

Աղետի վայրում արդեն հայտնաբերվել են զոհերի դիակներ: Որոնումները շարունակվում են: Հայտնաբերվել են նաեւ աղետյալ օդանավի բեկորները:

Օդանավում եղել է 142 ուղեւոր (այդ թվում 3 երեխա) եւ անձնակազմի 11 անդամ: Հաղորդվում է, որ ուղեւորների մեծ մասը Կոմորյան կղզիների եւ Ֆրանսիայի քաղաքացիներ են: Ֆրանսիացիների մեծ թիվը պայմանավորված է նրանով, որ ուղեւորներից շատերը եկել էին Փարիզից եւ հենց այդ «միացյալ» չվերթով պետք է հասնեին Կոմորյան կղզիներ:

Որոնողական եւ փրկարարական աշխատանքներին մասնակցում են ֆրանսիական երկու մեծ ռազմաօդանավ եւ մեկ ռազմանավ: Աերոբուսը ընկել է այն ժամանակ, երբ մոտավորապես մեկ ժամ էր մնում մինչեւ Կոմորյան կղզիների «Մորոնի» օդանավակայանում վայրէջք կատարելը:

Մասնագետներին դեռ ստույգ հայտնի չեն աղետի պատճառները, բայց հայտնի է, որ աղետի շրջանում եղել է վատ եղանակ, քամու արագությունը հասել է վայրկյանում 17 կիլոմետրի, եղել է ուժեղ ալեկոծություն:

Սա աերոբուսների հետ կապված արդեն երկրորդ խոշոր աղետն է վերջին 1 ամսվա ընթացքում: Հունիսի լույս 1-ի գիշերը «Էր Ֆրանս» ավիաընկերության A 330-200 աերոբուսը Ռիո դե Ժանեյրո-Փարիզ չվերթը կատարելիս ընկել էր Բրազիլիայի հյուսիս-արեւելյան ափերից ոչ շատ հեռու: Այդ օդանավում եղած 228 անձանցից 51-ի դիակները հայտնաբերված են:

# Իրաքի քաղաքների պաշտպանությունը փոխանցվեց իրաքցիներին

Իրաքի քաղաքների անվտանգության ապահովմամբ հունիսի 30-ից զբաղվում են իրաքցի զինծառայողները: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ ամերիկացի զինծառայողները կամաց-կամաց հեռանում են Իրաքից:

Այս կապակցությամբ Բաղդադում եւ ուրիշ քաղաքներում ձեռնարկվել են անվտանգության հավելյալ միջոցներ, որոնք պետք է խոչընդոտեն գրոհայինների գործողություններին: Իրաքի քաղաքներում վերահսկողություն է սահմանված ոչ միայն ավտոմեքենաների, այլեւ մոտոցիկլետների երթեւեկության վրա, քանի որ վերջին ժամանակներս մի շարք ահաբեկչություններ իրականացվել են մոտոցիկլետներով:

Բաղդադի քաղաքացիական պաշտպանության ներկայացուցիչ Թաքսին ալ Շեխլին հայտարարել է, որ իրաքցիներն ուրախ են սեփական ուժերով իրենց քաղաքները պաշտպանելու հնարավորության համար:

Բաղդադում երկուշաբթի երեկոյան տոնական միջոցառումներ են անցկացվել ամերիկյան զորքի դուրսբերման առիթով: Իրաքի պաշտպանության նախարարության նախկին շենքը վերստին հանձնվել է երկրի կառավարությանը:

Վերջին մեկ ամսում ահաբեկչությունների հետեւանքով զոհվել են հարյուրավոր իրաքցիներ: Միայն հունիսի 20-ին Քիրքուք քաղաքում ականված բեռնատար ավտոմեքենայի պայթյունից սպանվեցին 72 եւ վիրավորվեցին 200 անձինք:

Իրաքցի զինծառայողների եւ ոստիկանների ընդհանուր թվակազմը 174 հազար է: Հունիսի կեսերին Իրաքում մնացել էր 131 հազար ամերիկացի զինվոր: Երկկողմ պայմանագրի համաձայն, ամերիկյան զորքն Իրաքից լիովին պետք է դուրս բերվի մինչեւ 2011-ի վերջը:

# Սկանդալային գիրք Ջոն Էդվարդսի մասին

**ԱՄՆ-ում շուտով լույս կտեսնի մի սկանդալային գիրք նախկին սենատոր եւ նախագահության թեկնածու Ջոն Էդվարդսի մասին: «Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, Էդվարդսի նախկին օգնական Էնդրյու Յանգը հրատարակիչներին ասել է, որ նախագահության թեկնածուն անցյալում իրեն խոշոր պարգեւավճար է խոստացել, եթե ստանձնի իր արտամուսնական երեխայի հայրությունը:**

**Յանգը որոշակի գումարով պայմանագիր է կնքել St. Martin´s Press հրատարակչության հետ: Պայմանագրի գումարը չի հրապարակվում: Սկանդալը կապված է 2007 թվականի դեպքերի հետ, երբ առաջին անգամ լուրեր հայտնվեցին դերասանուհի եւ պրոդյուսեր Ռիել Հանտերի հետ Ջոն Էդվարդսի կապի մասին:**

**Էդվարդսը դեմոկրատների թեկնածուն էր նախագահական ընտրություններում, իսկ 2008-ին նա մասնակցեց նախնական ընտրություններին: Հանտերի հետ նրա կապը հաստատվեց արդեն ընտրարշավից նրա դուրս գալուց հետո: Յանգը չի ընդունել Էդվարդսի առաջարկը:**

**Ներկայումս Էդվարդսի նկատմամբ դաշնային քննություն է կատարվում: Դատախազությունը փորձում է պարզել, թե Էդվարդսը լռության դիմաց որքան էր խոստացել Հանտերին եւ Յանգին:**

# «Հայ փոքրիկ երգիչներ» ասոցիացիայի բարեգործական համերգաշրջանը

Աշխարհի երաժշտական շրջանակներում Տիգրան Հեքեքյանի ղեկավարած «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբն իր արժանի տեղն է զբաղեցնում: Վերջին 16 տարում ոչ միայն մեր երկրի, այլեւ համաշխարհային խմբերգային արվեստի ամենավառ էջերից են եղել այս խմբի բոլոր համերգները, մասնակցությունը խոշոր փառատոներին, մրցույթներին, նվաճած ոսկե, արծաթե մեդալները եւ, վերջապես, Եվրոպայի մշակույթի դեսպանի (2001) եւ Աշխարհի լավագույն մանկական երգչախմբի (2002) կոչումները:

Թվում է, թե քանիցս «մեր պետության իրական դեսպաններ» կոչված այս փոքրիկներն ու իրենց մաեստրոն արդեն ունեն բոլոր հնարավոր ձեռքբերումներն ու նվաճել են բոլոր բարձունքները, կարելի է ասել՝ «երգել են բոլոր երգերը»: Սակայն նրանք կանգ չեն առնում, հուրախություն ողջ երաժշտասեր հասարակության, իսկ ձեռնարկած նոր միջոցառումները միտված են ոչ միայն մեր մշակութային առօրյան հարստացնելուն, այլեւ ունեն շատ ավելի խորը ենթատեքստ եւ մարդասիրական նպատակներ:

Փորձենք համառոտ անդրադառնալ երգչախմբի՝ միայն վերջին տարվա բարեգործական համերգներին, որ կարելի է անվանել «2008-2009 գարունից գարուն բարեգործական համերգաշրջան»:

Այս պայմանական համերգաշրջանը բացեց «Հայ փոքրիկ երգիչների» համատեղ ելույթը ֆրանսիական երգչախմբի հետ, որը նրանց վաղեմի բարեկամ շվեյցարական «Կազա» հիմնադրամի հրավիրած հերթական խումբն էր: Հայ երգող մանուկների հետ այս հանդիպումը տարիներ ի վեր իրականացվող ծրագրի մաս էր, ըստ որի ամենատարբեր պատվիրակություններ, արվեստի, գործարար աշխարհի ներկայացուցիչներ հեռանում էին մեր երկրից՝ տրտում Հայաստանի եւ հայի հանդեպ մեծ սեր ունենալով: Այսպիսի հանդիպումների արդյունքում միլիոնավոր դրամների օգնություն է ստել Հայաստան, որը Տիգրան Հեքեքյանն ու իր սաները սիրով նվիրաբերել են որեւէ բարի նպատակի կատարման համար, ինչպես, օրինակ՝ Գյումրիի մանկատան սաներին հագուստի, գրենական պիտույքների տրամադրումը, 25.000 եվրո արժողությամբ երաժշտական գործիքների՝ հանրապետություն մուտք գործելն ու Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի համերգադահլիճի վերանորոգումը:

Երգչախմբի հաջորդ ելույթն ապրիլի 23-ին Հայոց մեծ եղեռնի թանգարանում էր՝ շվեյցարացի հայասեր Հակոբ Կյունցլերի՝ Հայաստան ժամանած ժառանգների համար՝ ի նշան երախտագիտության, ով իր առողջությունն ու կյանքն էր նվիրել Եղեռնից մազապուրծ շուրջ 8000 հայ մանուկներին փրկելու համար:

Մայիսի 25-ին «Հայ փոքրիկ երգիչները հանդես եկան երգչախմբի նվիրյալ հիմնադիր, ռեժիսոր, արվեստի վաստակավոր գործիչ Էլմիրա Հեքեքյանի հոբելյանին նվիրված համերգով: Սա հարգանքի տուրք էր իրենց մանկավարժին, ով իր կյանքով եւ անձնական օրինակով երեխաների համար հանդիսանում է մարդասիրության եւ բարեգործության ամենաիսկական «դասընթաց»:

Հունիսին երգչախումբը մեկնեց Արցախ՝ Շուշիի «Դանիել Ղազարյան» երաժշտանոցի 10-ամյակին նվիրված համերգով: Վարպետաց դասերը, որ մաեստրոն մեծագույն սիրով վարեց դպրոցի ուսուցչական կազմի հետ, ջերմ ու բովանդակալից զրույցները, մեթոդական օգնությունն իրավամբ նշանակալից աջակցություն էր տեղի մանկավարժների համար:

Տիգրան Հեքեքյանը հաճախ իր երգչախմբի հետ մեկնում է մարզեր՝ քաջ գիտակցելով մայրաքաղաքից հեռու հայ երաժշտարվեստը զարգացնելու անհրաժեշտությունը: 2008-ի ամռանն այդպիսի երկու ելույթ ունեցան Աշտարակի մշակույթի տանը եւ Գյումրիի մանկատանը: Բարեգործական գեղեցիկ, մտերմիկ երեկոներ՝ ծափերով ու ժպիտներով լի:

Հաջորդող կարեւոր կեսը ելույթն էր Լոնդոնի «Սենթ-Ջոնս» համերգադահլիճում՝ նվիրված ՀՀ անկախությանը: Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանատան աջակցությամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած այս բարեգործական համերգի ամբողջ եկամուտը ծառայեց ղարաբաղյան պատերազմում զոհված կամ առաջին կարգի հաշմանդամ դարձած ազատամարտիկների՝ մինչեւ 17 տարեկան երեխաներին նպաստ հատկացնելուն: Հիմնադրամի այս ծրագրից օգտվեց 4000-ից ավելի ընտանիք:

Երկու ամիս անց երգչախումբը մասնակցեց քաղցկեղով հիվանդ երեխաներին նվիրված մի լուսավոր միջոցառման, որը հույսի եւ օգնության պատգամ էր: Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ երեխաներն այցելեցին Երեւանի 10 ծննդատուն եւ իրենց երգն ու բարեմաղթանքները նվիրեցին հայ մայրերին, ում, անշուշտ, երկար պիտի ջերմացնի այս յուրօրինակ շնորհավորանքի մասին հիշողությունը:

թյան պատրաստակամության եւս մի գեղեցիկ դրսեւորում էր:

Ապրիլի 7-ին երգչախումբն արդեն մաս էր կազմում հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանի կազմակերպած միջոցառմանը: Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ երեխաներն այցելեցին Երեւանի 10 ծննդատուն եւ իրենց երգն ու բարեմաղթանքները նվիրեցին հայ մայրերին, ում, անշուշտ, երկար պիտի ջերմացնի այս յուրօրինակ շնորհավորանքի մասին հիշողությունը:

Մայիսի 7-ին երեխաները մտերմիկ համերգ-հանդիպում ունեցան իրենց հասակակիցների՝ «Մոնթե Մելքոնյանի» անվան վարժարանի սաների համար, որ եւս յուրատեսակ ներդրում էր երկրի ապագայի ու հզոր բանակի կայացման գործում:

Մայիսի 22-ին աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ծննդյան տարեդարձն էր: Մեր մեծ հայրենակցի 85-ամյա հոբելյանի առթիվ Թեքեյան մշակութային միությունը նրան շնորհեց իր ամենապատվավոր՝ «Ադամանդակուռ Արարատ» շքանշանը: Հանձնման հանդիսավոր արարողությանը մասնակցում էր նաեւ Տիգրան Հեքեքյանն իր փոքրիկ երգիչների հետ: Ազնավուրի մտերիմ բարեկամը դարձած երգչախումբն արդեն քանի տարի մշտական մասնակիցն է նրա հետ կապված յուրաքանչյուր կարեւոր միջոցառման, լինի դա Փարիզում, թե այստեղ: Այս անգամ էլ, ինչպես միշտ, անակնկալ էին պատրաստել սիրելի երգչի համար՝ նրա երգերից մեկը, բառերը փոխած, Ազնավուրի մասին տարբերակով:

Հոբելյանական օրերին փոքրիկ երգիչները եւս մի բարեգործական



Փոքրիկ երգիչները մաեստրոյի հետ



Տիկին Ռիտա Սարգսյանի հետ

առաքելություն ունեին. մասնակցեցին Լիզ Սարյանի եւ Սեդա Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան» համերգային ծրագրին, որի շահույթը փոխանցվեց սակավարյունությամբ տառապող երեխաներին օգնելու համար ստեղծված «Օգնեմ» հիմնադրամին:

Այսպիսով ավարտին մոտեցավ 2009-ի գարունը, սակայն մաեստրո Հեքեքյանի ծրագրերում դեռ շատ անելիքներ կան: Ըստ հնարավորի համառոտ ներկայացնելով աշխարհահռչակ խմբի բուռն ստեղծագործական կյանքի գարունից գարուն մեկ պատառիկը՝ երաժշտության, բարի գործերի ու լույսի հաղթանակի համանվագը, ուզում ենք ավարտել նրանց հարիր բարեմաղթանքներով. թող բարի գործերի լույսը սփռվի ամենուր, եւ մեր ազգային հպարտություն այս խմբի եւ իր ղեկավարի վաստակած ամեն շողը հազարապատկվի: Այդպես էլ կլինի, կյանքի օրենքն է:

Ս. Ս.



# «Մեկ օր Եվրոպայում»

## Եվրոպական ֆիլմերի օրեր Երեւանում

**Գերմանական, ֆրանսիական, լեհական, հոլանդական լավագույն ֆիլմերը մի քանի օր շարունակ Երեւանում կստեղծեն եվրոպական կինոարվեստի համայնապատկեր: «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Մեկ օր Եվրոպայում» արտամրցութային ծրագրի գլխավոր նպատակն է ներկայացնել եվրոպական կինոմշակույթի նրբությունները, դերասանական հմտություններն ու պրոֆեսիոնալիզմը:**

**Հուլիսի 14-ի Երեւանում նախատեսված է անցկացնել «Ֆրանսիական կինոյի օր», որտեղ ներառված են Լոռեն Տյուելի «Մեծավոր շրջապտույտ», Սիլվի Վերեյդի «Ստելլա», Անդրե Տեշինե «Գնացքի աղջիկը» ֆիլմերը:**

**«Ֆրանսիական կինոարտադրության 7 ֆիլմ է ընդգրկված արտամրցութային ծրագրում: Անհամբերությամբ սպասում եմ ֆիլմերի ցուցադրությանը: Հետաքրքրական կլինի լսել հայ հանդիսատեսի կարծիքը: Հատկանշական է, որ այս տարի փառատոնը կբացվի հայկական ծագմամբ ֆրանսիացի տաղանդավոր ռեժիսոր Ալեն Թերզյանի «Մեծավոր շրջապտույտ» ֆիլմով», նկատեց Ֆրանսիայի դեսպանատան մշակութային ներկայացուցիչ Ժան-Պոլ Մարտենը:**

**«Գերմանական ֆիլմերի օրը» կանցկացվի հուլիսի 17-ին՝ Անդրեաս Դրեզենի, Ֆայթ Հելմերի, Քրիստիան Փեցոլդի ֆիլմերի ցուցադրությամբ:**

**«Լեհական կինոյի օրը» կնշանավորվի Անջեյ Վայդայի «Խնկեղեգ» ֆիլմի ներկայացմամբ, որը Բեռլինյան կինոփառատոնի բացահայտումներից մեկն է եղել:**

**«Եվրոպական ֆիլմերին զուգահեռ կինոփառատոնի արտամրցութային ծրագրում առանձնացվել է արեւելյան կինոարվեստը: Արդեն պատրաստված «Արաբական գիշերներ» ծրագրում ներկայացված են արաբական երկրների լավագույն ֆիլմերը», նկատեց կինոփառատոնի գեղարվեստական հարցերով տնօրեն Սուսաննա Հարությունյանը:**

**«Արաբական գիշերներ» ծրագրի համակարգող Վրեժ Քասունիի վստահեցմամբ ծրագիրն ավելին ընդգրկուն է դարձել: Ծրագրում ներառված են լիբանանյան, եգիպտական, սիրիական ռեժիսորների ֆիլմերը: «Առաջին անգամ կներկայացվի մարոկկյան կարճամետրաժ ֆիլմերի հավաքածուն: Կցուցադրվի լիբանանյան լավագույն ֆիլմերի ռետրոսպեկտիվան», նշեց Քասունին:**

### «Ռեժիսորներ առանց սահմանների» ֆորում

**«Ռեժիսորներ առանց սահմանի» (ՌԱՍ) համատեղ արտադրության ֆորումը նպատակ ունի համախմբել տարածաշրջանի ռեժիսորներին՝ փոխանակել կարծիքներ, գաղափարներ, ինչու ոչ, նաեւ ծանոթություն հաստատել ու համագործակցության եզրեր փնտրել:**

**Ֆորումին համատեղ կանցկացվի նախագծերի զարգացման դասընթացը, որը կներառի տարածաշրջանի երկրներից ներկայացված 10 նախագիծ, եւ Հայաստան-Թուրքիա Կինոպլատֆորմի վավերագրական ֆիլմերի նախագծերի զարգացման դասընթացը: Կազմակերպիչները նկատում են, որ կինոպլատֆորմին ներկայացված 6 վավերագրական նախագծերը գուցե հետագայում դառնան հայթուրքական առաջին համատեղ կինոարտադրությունները:**

**Երկու ծրագրերում ներկայացվել է ավելի քան 40 նախագիծ. ընդգրկված են ֆիլմեր Հայաստանից, Ուկրաինայից, Էստոնիայից, Թուրքիայից, Վրաստանից:**

**«Նախագծերի մեծ մասը հեղինակել են սկսնակ ռեժիսորներ, պրոդյուսերներ: Նրանցից շատերի համար համատեղ արտադրության եւ լիամետրաժ նախագծի առաջին փորձն է: Հետեւաբար որոշեցինք նախագծերի համար կազմակերպել զարգացման երկօրյա դասընթաց, որի ընթացքում մասնակիցների հետ կաշխատեն սցենարի եւ նախագծի զարգացման խորհրդատուները», ասաց «Ռեժիսորներ առանց սահմանների» համակարգող Հասմիկ Հովհաննիսյանը:**

**Դասընթացները կվարեն անվանի կինոգործիչներ Անջեյ Կրակովսկին եւ Արիելա բեն Դովը: Կրակովսկին 1976-ին գլխավորել է Օսկարի առաջադրված «California Reich» լիամետրաժ վավերագրական ֆիլմերի արտադրությունը: Այժմ Կրակովսկին ռեժիսուրա եւ կինոարտադրություն է դասավանդում Նյու Յորքի City College-ում՝ գլխավորելով Մեդիա եւ հաղորդակցության արվեստի բաժինը: Կրակովսկու ռեժիսորական վերջին՝ «Պալլադինին փնտրելիս» աշխատանքը ընդգրկվել է կինոփառատոնի միջազգային խաղարկային ֆիլմերի մրցույթում:**

**Դասախոսություններ կկարդան MadCat կանանց միջազգային կինոփառատոնի համահիմնադիր եւ կուրատոր Արիելա բեն Դովը, Ռոտերդամի միջազգային կինոփառատոնի ծրագրերի ղեկավար Լյուդմիլա Ցվիկովան:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ցուցահանդես-վաճառք՝ բարեգործության ակնկալիքով

**Art Salon Jerom նորաբաց պատկերասրահը կարճ ժամանակահատվածում դարձել է յուրահատուկ վայր, որտեղ երիտասարդ շնորհալի արվեստագետները կարողանում են ներկայանալ: Նորաբաց սրճարան-պատկերասրահի աշխատակազմը վստահեցնում է, որ իրենք օգնում են նաեւ հասարակությանը՝ ծանոթանալու գեղեցիկ ժամանակակից հայ արվեստին:**

**Երեկ պատկերասրահում տեղի ունեցած միջոցառման նպատակն էր ոչ միայն ներկայացնել երիտասարդ ստեղծագործողների աշխատանքները, այլեւ կազմակերպել ցուցահանդես-վաճառք, որի ողջ հասույթը տրամադրվելու է Մարի Իզմիրյան մանկատան երեխաների հանգստի կազմակերպմանը:**

**Ներկայացված 60 գեղանկարչական աշխատանքներն ու քանդակներն առանձնանում էին յուրահատուկ մոտեցմամբ ու ավանգարդ լուծումներով: Դաշնամուրային կենդանի կատարումներն էլ ներդաշնակություն էին հաղորդում՝ միաձուլելով երկու հրաշալի գաղափար՝ արվեստ եւ բարեգործություն:**

**Պատկերասրահի տնօրեն Արման Մուրադյանը նկատում է, որ բարեգործության գաղափարը համախմբել է բազմաթիվ երիտասարդ արվեստագետների:**

**«Կես ժամում արդեն վաճառվել է 2 նկար: Իհարկե գումարը մեծ չէ, սակայն այն մեզ ոգեշնչում է: Վստահ ենք անտարբերներ չեն լինի ու կկարողանանք օգնել մանկատան երեխաներին»:**

**Քանդակագործ Հայկ Մուրադյանն էլ ցուցահանդեսին ներկայացրել էր վերջին շրջանի մի քանի ստեղծագործություններ: «Մեծահարուստ չեմ, հասարակությանը կարող եմ նվիրել միայն իմ արվեստը, ինչը, ցավոք, մեր երկրում այնքան էլ հաճախ չի գնահատվում: Սակայն երջանիկ եմ, որ կարող եմ իմ փոքրիկ ներդրումն ունենալ մանկատան երեխաներին դաստիարակելու գործում: Բարեգործություն կատարելը հրաշալի զգացողություններ է պարգեւում: Տպավորություններն այնքան շատ են, որ կարող են միանգամից մի քանի աշխատանքի ծնունդ դառնալ: Մանկատան երեխաները մեր քնքշանքի, ներկայության ու մտահոգության կարիքն են զգում», ասաց քանդակագործը:**

Հ. Հ.

AZG NEW 7.QXD 6/30/2009 10:56 PM Page 1



# «Փյունիկը» կրկին ստանձնեց առաջատարի դերը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 14-րդ տուրում ուշադրության կենտրոնում «Փյունիկ»-«Միկա» հանդիպումն էր։ Ցավոք, սպասված լարված մրցակցությունը չստացվեց եւ դրանում մեղավոր էին «Միկայի» ֆուտբոլիստները։ Նրանք բավական դանդաղ էին գործում, չէին հասցնում ժամանակին վնասազերծել արագաշարժ փյունիկցիներին։ Ճիշտ է, առաջին խաղակեսում գոլային պահերով «Միկան» գերազանցեց «Փյունիկին», սակայն Ուլիսես Մոնտենեգրոն եւ Բոտի Դեմելը չօգտագործեցին նպաստավոր պահերը։ Իսկ ահա փյունիկցիները կարողացան օգտագործել մրցակցի դարպասապահի կոպիտ սխալը եւ Գեւորգ Ղազարյանը 32-րդ րոպեին բացեց հաշիվը։



Ընդմիջումից հետո փյունիկցիների առավելությունն ավելի շոշափելի դարձավ, երբ նրանք արագություն հաղորդեցին հարձակողական գործողություններին։ 67-րդ րոպեին Կառլեն Մկրտչյանը ճշգրիտ փոխանցումով հարվածային դիրք դուրս բերեց Գեւորգ Ղազարյանին եւ վերջինս կրկնապատկեց հաշիվը։ Իսկ խաղավերջում անկյունայինի խաղարկումից հետո գլխի հարվածով 3-րդ գնդակը խփեց Կառլեն Մկրտչյանը։

Հաղթելով 3-0 հաշվով, «Փյունիկը» շրջանցեց «Միկային» ու կրկին գլխավորեց աղյուսակը։ Փյունիկցիները դեռ մեկ խաղ էլ պետք է անցկացնեն հուլիսի 7-ին՝ հյուրընկալելով «Արարատին»։ Անկախ այդ հանդիպման արդյունքից, «Փյունիկը» դարձավ առաջնության առաջին կեսի հաղթող։

**Սամվել Դարբինյան («Միկա»)**- Ճիշտն ասած, չէի սպասում, որ մեզ համար կարեւոր այս հանդիպումն այսպես անհաջող կդասավորվեր։ Առաջին խաղակեսը դեռ ոչինչ, հավասար խաղ էր ընթանում, իսկ երկրորդում մեր ֆուտբոլիստները խաղադաշտում կանգնած էին, կարծես թիմ չկար։ Երեւի տղաների վրա ծանրաբեռնվածությունը մեծ էր, չկարողացան հավաքվել ու փրկել խաղը։ Իսկ ահա փյունիկցիներն ավելի ոգեւորված խաղացին ընդմիջումից հետո, արագություն հաղորդեցին գրոհներին եւ արժանի հաղթանակ տարան։ Գտնում եմ, որ 3-0-ն օբյեկտիվ հաշիվ է։ Իհարկե, հոգեբանական առումով այս պարտությունը շատ ծանր էր եվրոգավաթների խաղարկության շեմին։ «Փյունիկը» մեզ դաս տվեց ու պատժեց։

**Վարդան Մինասյան («Փյունիկ»)**- Ֆուտբոլիստները գրեթե 100 տոկոսով կատարեցին իրենց տրված առաջադրանքը։ Լավ էի ուսումնասիրել «Միկայի» խաղը եւ այսօր ավելի հետ քաշված էինք խաղում, որ օգտագործենք ազատ տարածությունները։ Կարծես թե դա ստացվեց։ Առաջին խաղակեսում մի փոքր կաշկանդված էին, ավելորդ շտապողականություն կար ֆուտբոլիստների գործողություններում, իսկ ահա ընդմիջումից հետո ավելի վստահ էին գործում։ Մտահոգում է միայն Վահագն Մինասյանի վնասվածքը։

Գիտեք, որ Մարկոսը մեզ հետ է մարզվում։ Նա բարձրակարգ ֆուտբոլիստ է, լավ մարզավիճակում է եւ վստահ եմ, որ կփոխարինի Հենրիխ Մխիթարյանին։ Եթե հասցնենք նրան հայտավորել, ապա հուլիսի 7-ին կխաղացնենք «Արարատի» դեմ։ Գոնե մեկ խաղ նա պետք է անցկացնի փյունիկցիների հետ, որ համագործակցության եզրեր գտնի։ Զագրեբի «Դինամոն» ուժեղ մրցակից է, այսօր չորս տեսաերիզ փոխանակեցինք, ինչը հնարավորություն կտա ուսումնասիրելու մրցակցի խաղը։

Նշենք, որ «Փյունիկի» եւ «Միկայի» հանդիպմանը ներկա էին Զագրեբի «Դինամոյի» եւ շվեդական «Հելսինգբորգի» ներկայացուցիչները։

Իր երկրպագուներին շարունակում է հիասթափեցնել «Արարատը»։ «Ուլիսի» հետ խաղում թիմը տխուր տպավորություն թողեց եւ 13-րդ անընդմեջ պարտությունը կրեց խոշոր հաշվով։ Ուլիսցիներից երկու գոլ խփեց Արտյոմ Ադամյանը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Արթուր Քոչարյանը։ Իսկ «Արարատը» կրկին չգտավ մրցակցի դարպասի բանալին, թեեւ 11 մ հարվածի իրավունք էր ստացել։ Սակայն Գալուստ Պետրոսյանի հարվածը հետ մղեց դարպասապահ Մանվել Աֆրիկյանը։

«Գանձասարը» Կապանում 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեց «Շիրակի» նկատմամբ։ Արդեն 2-րդ րոպեին շիրակցի Անդրանիկ Բարիկյանը բացեց հաշիվը։ Հետագայում Արսեն Ավետիսյանը 2 գոլ խփեց ու «Գանձասարին» հաղթանակ պարգեւեց։ «Բանանցն» էլ խաղավերջում կարողացավ կոտրել «Կիլիկիայի» դիմադրությունը եւ Նորայր Գյոզալյանի ու Սամվել Մելքոնյանի խփած 2 գոլերի շնորհիվ հաղթել։

## Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 13 | 10 | 3 | 0 | 30-6 | 33 |
| 2. Միկա | 14 | 10 | 2 | 2 | 26-14 | 32 |
| 3. Բանանց | 14 | 9 | 0 | 5 | 25-16 | 27 |
| 4. Ուլիս | 14 | 8 | 2 | 4 | 22-11 | 26 |
| 5. Գանձասար | 14 | 5 | 2 | 7 | 10-20 | 17 |
| 6. Շիրակ | 14 | 3 | 4 | 7 | 13-26 | 13 |
| 7. Կիլիկիա | 14 | 3 | 1 | 10 | 12-23 | 10 |
| 8. Արարատ | 13 | 0 | 0 | 13 | 3-25 | 0 |

## Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Հենրիխ Մխիթարյան | «Փյունիկ» | 11 |
| Բոտի Դեմել | «Միկա» | 9 |
| Արամ Ոսկանյան | «Միկա» | 7 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 7 |
| Արթուր Քոչարյան | «Ուլիս» | 7 |

# Ջերմուկը հյուրընկալել է շախմատիստներին

**Ջերմուկում այս օրերին շախմատի երկու մրցաշար է անցկացվում։ Դրանցից մեկը նվիրված է անցյալ տարի կյանքից անժամանակ հեռացած գրոսմայստեր Կարեն Ասրյանի հիշատակին, մյուսը պատանեկան միջազգային մրցաշար է տարիքային երեք խմբերով (մինչեւ 10, 12 եւ 16 տարեկաններ)։**

**Կարեն Ասրյանի հուշամրցաշարին մասնակցում են Հայաստանի 41 շախմատիստներ։ Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Լեւոն Բաբուջյանը (2506)։ Մասնակիցների թվում է միակ գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը, որը 2-րդ վարկանիշն ունի (2486)։ Մրցաշարում արդեն անցկացվել է 3 տուր։ 2,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Լեւոն Բաբուջյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Սուրեն Պողոսյանը, Արման Հայրապետյանը, Դավիթ Կարապետյանը, Արթուր Ղարագյոզյանն ու Վարդան Խոջայանը։**



**Շախմատի միջազգային մրցաշարում մասնակիցների թվում են Ռուսաստանի, Ղազախստանի, Իրանի, Ֆրանսիայի ներկայացուցիչները։ Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում 3 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով առաջատարներն են Արթուր Հոգմրցյանը, Միքայել Մկրտչյանը, Սոնա Ասատրյանն ու ռուսաստանցի Նիկոլայ Գոլիկովը։ Տարիքային այս խմբում հանդես են գալիս 38 շախմատիստներ։**

**Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում 2 տուրից հետո նույնքան միավոր են վաստակել Հարություն Բարսեղյանը, Կարեն Հովհաննիսյանը, Արսեն Աղաջանյանը, Էրիկ Խաչատրյանը, Մարատ Մեժլումյանը եւ Վահան Վարոսյանը։ Տարիքային այս խմբում խաղում են 49 շախմատիստներ։**

**Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի 48 մասնակիցներից 2 տուրից հետո նույնքան հաղթանակ են տոնել Դավիթ Պետրիկյանը, Վահե Չախոյանը, Արա Դիլոյանը, Սիփան Մուրադյանը, Արման Միքայելյանը, Ռաֆայել Բակունցը, Կարեն Նամալյանը եւ Տիգրան Իսկանդարյանը։**

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Վանես Մարտիրոսյանի հերթական հաղթանակը

**ԱՄՆ-ում բնակվող պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը, որ օվկիանոսից այն կողմ է տեղափոխվել Աբովյանից, իր հերթական հաղթանակը տոնեց։ Նրա մրցակիցը ծագումով ուկրաինացի Անդրեյ Ցուրկանն էր, որը եւս բնակվում է ԱՄՆ-ում։ Ատլանտիկ Սիթիում կայացած 10 ռաունդանոց մենամարտն ավարտվեց 6-րդում։ Վանես Մարտիրոսյանի առավելությունն այնքան ակնհայտ էր, որ Ցուրկանի մարտավարները դադարեցրին մենամարտը։ 23-ամյա Վանեսը պրոֆեսիոնալ ռինգում 25-րդ հաղթանակը տոնեց։ Նա առայժմ անպարտելի է։ 31-ամյա Անդրեյ Ցուրկանը 31-րդ մենամարտն էր անցկացնում, որից 26-ում հաղթել է, 5-ն ավարտել է ոչ-ոքի։**

# Քենթիկյանի մրցակցուհին Կարոլինա Գեյսն է




**WBA-ի եւ WIBF-ի վարկածներով թեթեւագույն քաշային կարգի աշխարհի չեմպիոնուհի Սյուզի Քենթիկյանը հուլիսի 4-ին Համբուրգում իր տիտղոսների պաշտպանության համար ռինգ դուրս կգա արգենտինացի Կարոլինա Գեյսի հետ մենամարտելու։**

**«Այդ մենամարտը հնարավոր է բարդ ստացվի։ Մրցակիցը բավական ուժեղ է եւ կրում է քաշային հաջորդ կարգի WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնուհու ժամանակավոր տիտղոսը։ Սակայն մենք շատ լավ ենք նախապատրաստվել առաջիկա մենամարտին եւ կարծում եմ Սյուզիի արագաշարժությունը նրա հաջողության գրավականը կլինի», նշել է Սյուզիի մարզիչ Մագոմեդ Շաբուրովը։**

**Հիշեցնենք, որ 21-ամյա Քենթիկյանը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է։ Նա շահել է բոլոր 24 մենամարտերը, որոնցից 16-ը՝ տեխնիկական նոկաուտով։ Նրա մրցակցուհին 16 մենամարտերից միայն մեկում է պարտվել։ Սյուզին ընդամենը 21 տարեկան է, մինչդեռ արգենտինացին նրանից 11 տարով մեծ է։**

# Քառորդ եզրափակիչի մասնակիցները հայտնի են

Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի մասնակիցները։ Կանանց մրցապայքարում հերթական հաղթանակը տոնեց Դինարա Սաֆինան։ Կենտրոնական կորտի տանիքի տակ նա պարտության մատնեց ֆրանսուհի Ամելի Մորեսմոյին (4-6, 6-3, 6-4)։ Պայքարը շարունակում են նաեւ Ուիլյամս քույրերը։ Սերենան հաղթեց Դանիելա Հանտուխովային, Վինուսն առավելության հասավ Աննա Իվանովիչի նկատմամբ։ Հաջորդ փուլ են մտել նաեւ Սաբինա Լիսիցկին, Ագնեշկա Ռադվանսկան, Ֆրանչեսկա Սկյավոնեն, Ելենա Դեմենտեւան եւ Վիկտորյա Ազարենկոն։

Տղամարդկանց մրցաշարում հաղթարշավն է շարունակում Ռոջեր Ֆեդերերը՝ պարտության մատնելով Ռոբին Սոդերլինգին (6-4, 7-6, 7-6)։ Հաջորդ փուլում կխաղան նաեւ Լլեյթոն Հյուիթը, Էնդի Ռոդիկը, Էնդի Մարեյը, Խուան Կառլոս Ֆերերոն, Թոմի Հաասը, Նովակ Ջոկովիչը, Իվո Կառլովիչը։

# Վախճանվեց ամենատարեց օլիմպիական չեմպիոնը

100 տարեկանում վախճանվեց օլիմպիական խաղերի ամենածեր չեմպիոնը՝ բրիտանացի Գոդֆրի Ռեմպլինգը։ Նա ոսկե մեդալի էր արժանացել Բեռլինում՝ 1936-ին կայացած օլիմպիական խաղերի 4x400 մ փոխանցումավազքում։ Օլիմպիական չեմպիոնը բնակվում էր Հերտֆորդշիրում գտնվող ծերանոցում եւ մահացել էր քնած ժամանակ։ Անցած ամիս նա իր աղջկա՝ հանրահայտ դերասանուհի Շարլոտա Ռեմպլինգի եւ մյուս հարազատների հետ նշել էր ծննդյան 100-ամյակը։

Գոդֆրի Ռեմպլինգը ծնվել էր Լոնդոնի հարավարեւելքում գտնվող Բլեքհիթ բնակավայրում։ 29 տարի նա ծառայել էր անգլիական բանակում եւ զորացրվել գնդապետի կոչումով։ Այդ ժամանակվանից նրան գնդապետ էին կոչում։

# Թենիսի երկու մրցաշար Երեւանում

Մայրաքաղաքի «Orange Tennis» ակումբում երեկ տրվեց թենիսի երկու մրցաշարերի մեկնարկը։ Առաջինը տարիքային երկու խմբով (մինչեւ 14 եւ մինչեւ 16 տարեկաններ) անցկացվող միջազգային մրցաշարն է, իսկ 2-րդում թենիսիստները կվիճարկեն «Երեւանի գավաթը»։ Վերջին մրցաշարն անցկացվելու է 9-րդ անգամ եւ այսուհետեւ կրելու է հայկական թենիսի երախտավոր Ալեքսանդր Ծատուրյանի անունը։ Մրցաշարերին կմասնակցեն 16 երկրների 130-ից ավելի պատանի թենիսիստներ։ Միաժամանակ մրցումներ կանցկացվեն 6 կորտերում։ Հայ թենիսիստների համար այս մրցաշարերն ուժերի հիանալի ստուգատես կլինեն, կօգնեն կատարելագործելու վարպետությունն ու բարձրացնելու վարկանիշը։

# Առաջին անգամ

Ֆուտբոլի Գերմանիայի երիտասարդական հավաքականն իր պատմության մեջ առաջին անգամ դարձավ Եվրոպայի չեմպիոն։ Եզրափակիչ խաղում գերմանացիները 4-0 հաշվով ջախջախեցին Անգլիայի իրենց հասակակիցներին։ Երկու գոլ խփեց Սանդրո Վագները, մեկական անգամ աչքի ընկան Գոնսալո Կաստրոն եւ Մեսուտ Օզիլը։

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Նոր հուշադրամներ

## «Սուրբ Սարգիս Զորավար»





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հայ մշակույթի պատմությանը նվիրված «Սուրբ Սարգիս Զորավար» ոսկե հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում պատկերված է զարդանախշ, որից ներքեւ նշված է թողարկման տարեթիվը՝ «2009»: Ներքեւում եզրաշուրթի մոտ երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «5000» եւ «ԴՐԱՄ»: Զարդանախշը, թողարկման տարեթիվը եւ անվանական արժեքի թվանիշը եզերված են գծավոր շրջանագծով: Եզրաշուրթի եւ շրջանագծի միջեւ շրջագծով հայերեն մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում Սուրբ Սարգսի պատկերն է՝ ձիուն հեծած վիշապին հաղթող: Վերեւում եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է՝ «ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐ»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հայաստանի նկարիչների միության անդամ Կարապետ Աբրահամյանը: Հուշադրամը դրվագվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 5000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 4,3 գ |
| Տրամագիծը | 18,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | լավացված |
| Տպաքանակը | 5000 հատ |

## «Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակ»





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է ոսկե հուշադրամ՝ նվիրված Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում չորս տողով հայերեն մակագրված է համապատասխանաբար՝ «ՇՈՒՆՋԴ ՏՈՒՐ», «ՀՈԳԻԴ, ԲԱՑ», «ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔ» եւ «ՄԻ ՏՈՒՐ ԹՇՆԱՄՅԱՑ»: Հինգերորդ տողում զետեղված է Խաչատուր Աբովյանի ստորագրությունը, որից ներքեւ թողարկման տարեթիվն է՝ «2009»: Ներքեւում եզրաշուրթի մոտ երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «10000» եւ «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է կողքերից ուղղահայաց գծերով, իսկ վերեւում՝ կիսաշրջանագծով: Եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:

Հուշադրամի դարձերեսին Խաչատուր Աբովյանի դիմաքանդակն է, որից ձախ երկու տողով մակագրված է համապատասխանաբար՝ «200» եւ «ԱՄՅԱԿ»: Վերեւի ձախում եզրաշուրթի մոտ մակագրված է՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հայաստանի նկարիչների միության անդամ Կարապետ Աբրահամյանը: Հուշադրամը դրվագվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Գլաձորի համալսարանի 725-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է արծաթե հուշադրամ՝ նվիրված Գլաձորի համալսարանի 725-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում պատկերված է Գլաձորի համալսարանի տարածքում գտնվող Սուրբ Նշան եկեղեցին: Պատկերը եզերված է ներքեւից հորիզոնական եւ կողքերից ուղղահայաց գծերով, որոնց ծայրերը միացված են արտաքին կիսաշրջանակով: Պատկերից աջ նշված է թողարկման տարեթիվը՝ «2009», իսկ ներքեւում երկու տողով զետեղված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Եզրաշուրթի մոտ աջից դեպի ձախ շրջագծով հայերեն մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է գրակալ՝ գրքերի եւ ձեռագրերի համար, որից ձախ երկու տողով մակագրված են համապատասխանաբար՝ «725» եւ «ամյակ»: Աջում երկուական տողերով վերից վար զետեղված են տարբեր ժամանակահատվածների Գլաձորի համալսարանի տնօրենների անունները՝ «Ներսես Մշեցի», «Եսայի Նչեցի», «Տիրատուր Կիլիկեցի», «Հովհան Որոտնեցի», «Գրիգոր Տաթեւացի»: Եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մա-





կագրված են ձախում՝ «ԳԼԱՁՈՐԻ», իսկ աջում՝ «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը դրվագվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9990 |
| Զանգվածը | 31,1 գ |
| Տրամագիծը | 38,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 500 հատ |

## «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության 825-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արծաթե հուշադրամը նվիրված է Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության 825-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում ժամացույցի սլաքի ուղղությամբ գալարագծով մակագրված է՝ «միջնադարյան իրավունքի հայկական հուշարձան՝ «Գիրք Դատաս-





տանի» 825-ամյակը»: Եզրաշուրթի մոտ աջում մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»: Եզրաշուրթի մոտ ձախում թեքությամբ նշված է թողարկման տարեթիվը՝ «2009»:

Հուշադրամի դարձերեսի ձախում Մխիթար Գոշի կիսադեմն է դեպի աջ: Ներքեւում երկու տողով զետեղված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Աջում ուղղահայաց զուգահեռ մակագրված են՝ «ՄԽԻԹԱՐ» եւ «ԳՈՇ», որոնք առանձնացված են ուղղահայաց գծով:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը դրվագվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 500 հատ |

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Արարատ քաղաքում Բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0235) 2 14 16 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Արարատ» մասնաճյուղ ք. Արտաշատ, Շահումյան փ. 31 հասցեով՝ ժամը 10:00-18:00 (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հունիսի 29-ից մինչև հուլիսի 8-ը:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Մարտունի քաղաքում բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0264) 2 32 62 («Գեղարքունիք» մասնաճյուղ), (0262) 4 77 72 («Մարտունի» մասնաճյուղ) հեռախոսահամարներով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Գեղարքունիք» մասնաճյուղ, ք. Գավառ, Բոշնաղյան փ. 6 հասցեով եւ «Մարտունի» մասնաճյուղ, ք.Մարտունի, Երեւանյան 26 հասցեով՝ ժամը 11:00-16:00-ը (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հունիսի 22-հուլիսի 5:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի հունիսի 30-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է գույքի գնահատման մրցույթ: Բոլոր հետաքրքրված կազմակերպություններին խնդրում ենք հայտեր եւ գնային առաջարկներ ներկայացնել մինչեւ սույն թվականի հուլիսի 10-ը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Կենտրոնական գրասենյակ (հասցե՝ ք. Երեւան, Բայրոնի 1):

Մանրամասների համար կարող եք զանգահարել՝ (374 10) 56 58 58, 56 85 85 հեռախոսահամարներով:

**ԿՈՐԵԼ Է**

**Դավիթ Գեւորգյանի** փաստաթղթերը՝ սոցիալական քարտ, վարորդական իրավունք, մեքենայի տեխնիկական անձնագիր եւ այլն: Գտնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Զանգահարել՝ 091 47-89-26:

## Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հունիսի 30-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «Վարկային բյուրոյի կողմից այլ վարկային բյուրոյին կամ ՀՀ ԿԲ-ին տվյալների բազայի փոխանցման կամ տրամադրման կարգը եւ պայմանները» կանոնակարգ 9/02-ը, ինչպես նաեւ ՀՀ ԿԲ խորհրդի 2009-2011 թթ. զարգացման տեսլականի եւ ռազմավարական ծրագրի վերանայված տարբերակները:

Լրացում կատարվեց «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման» կարգում, «Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիայի» ձեւում եւ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում:

Խորհուրդը որոշեց «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին վարկային բյուրոյի գործունեության լիցենզիա տրամադրել: Գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրվեցին «ՈՍԿԵ ԼՈՒՄԱ» ՍՊԸ-ին եւ «ԿԱՐԱՐՏ ԿՐԵԴԻՏ» ՓԲԸ-ին: Վերաձեւակերպվեց «Ա/Ձ Սերգեյ Աղայան» փոխանակման կետի արտարժույթի առուվաճառքի թիվ 491/1 լիցենզիան:

Խորհուրդը որոշեց «ԵՐԵՎԱՆ ԲՐՈՔԵՐ» ՍՊԸ ներդրումային ընկերությանը տալ լուծարման թույլտվություն եւ ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչեց ներդրումային ծառայությունների մատուցման թիվ ՆԸ 0002 լիցենզիան:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 30.06.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 360.06 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 507.60 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.59 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 217.18 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: